

**ԱՂԻՔԵՋԱՆԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔ.
ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ
Սարգիս Հարությունյան**

**Աղրբեջանական սփյուռքը որպես
«ռազմավարական ռեսուրս»**

Աղրբեջանի ազգային անվտանգության հայեցակարգի մշակումներում եւ ընդհանրապես՝ երկրի զարգացմանն առնչվող դրույթներում կարելի է հանդիպել այն ձեւակերպմանը, որ էներգակիրներից զատ Աղրբեջանի համար էական նշանակություն ունի սեփական ժողովրդագրական ռեսուրսը, որը, մահմեդական միջավայրին բնորոշ հանգամանքներից ելնելով, միտում ունի համեմատաբար արագ բազմանալու:

Սակայն այդ երկրի հատկապես մարզերում առկա սոցիալ-տնտեսական ծանր պայմանների պատճառով անցած տասնհինգ տարիների ընթացքում Աղրբեջանը գրեթե կիսով չափ կորցրել է իր ազգաբնակչությունը: Աղրբեջանական ընդդիմության, ամերիկյան եւ ռուսական փորձագիտական տվյալների համաձայն՝ ներկայումս Աղրբեջանի Հանրապետության բնակչությունը կազմում է 4-4.5 միլիոն մարդ: Ընդ որում՝ արտագաղթը շարունակվում է, չնայած ավելի փոքր չափերով: Ըստ ռուսական իրավապահ մարմինների գնահատականի՝ այսօր միայն Մոսկվայի շրջանում փաստացի բնակվում ու աշխատում են մոտ մեկ ու կես միլիոն աղրբեջանցիներ, իսկ ողջ Ռուսաստանում՝ երեք միլիոն: Ղազախստանում նրանց թիվը կազմում է 150 հազար, Ուկրաինայում ու Ուզբեկստանում՝ 100-հազարական եւ այսպես շարունակ: Մինչդեռ աղրբեջանցիներ են արտագաղթել նաեւ Եվրոպա, Միացյալ Նահանգներ եւ Թուրքիա (վերջինիս պարագայում՝ հատկապես Նախիջևանից):

Նման պայմաններում «ժողովրդագրական ռեսուրս» հասկացությունը վերջին տարիներին աղրբեջանական իշխանությունների կողմից ենթարկվեց որոշակի ձեւափոխման: Ներկայումս այդ եզրի ներքո առաջին հերթին հասկացվում է անցած տասը-տասնհինգ տարիների ընթացքում հախուռն կերպով գերազանցապես հետխորհրդային տարածքում ձեւավորված սփյուռքը, որի ռեսուրսների օպտիմալ օգտագործումը դարձել է Աղրբեջանի Հանրապետության ազգային զարգացման ռազմավարական պատկերացումների բաղկացուցիչ մաս:

Այդ ամենից զատ, զարգացման որոշակի սցենարների պարագայում, «Ժողովրդագրական ռեսուրս» հասկացության սահմաններում է նաեւ ներառվում այսօր Իրանում բնակվող, Բաքվի պատկերացմամբ, 25 միլիոնանոց ադրբեջանական համայնքը, որը դիտարկվում է որպես «ռազմավարական պահուստ»:

Այս տրամաբանության ներքո են ընկնում նաեւ Վրաստանում բնակվող մոտ 400 հազար ադրբեջանցիները, որոնց ուղղությամբ տարվող աշխատանքներում վերջին 3-4 տարիներին էապես ակտիվացել են Ադրբեջանի Ազգային անվտանգության նախարարությունը եւ նրա փաստացի վերահսկողության ներքո գտնվող, Արտերկրում բնակվող ադրբեջանցիների հարցերով զբաղվող պետական կոմիտեն:

Ադրբեջան–սփյուռք կապերի ձեւավորումը

Դեռեւս խորհրդային տարիներից Ադրբեջանում գործում էր «Վաթան» (ադրբ.՝ հայրենիք) միությունը, որը Բաքվի համար միակ մարմինն էր շփվելու արտերկրում գտնվող ադրբեջանցիների հետ:

Միեւնույն ժամանակ, Երկրորդ աշխարհամարտից հետո գլխավորապես ամերիկյան եւ թուրքական հետախուզությունների օժանդակությամբ ստեղծվեցին ադրբեջանական ազգային եւ մշակութային մի շարք կազմակերպություններ (Ադրբեջանական մշակութային միություն, Ադրբեջանցի վտարանդիների կազմակերպություն, Ադրբեջանական ազգային կոմիտե եւ այլն), որոնց հիմնական նպատակն էր հակախորհրդային, իսկ որոշ դեպքերում՝ նաեւ հակաիրանական քարոզարշավի անցկացումը: Այդ կազմակերպությունների թվին պետք է դասել նաեւ 1920թ. Ադրբեջանի խորհրդայնացումից հետո գերազանցապես թուրքիայում հաստատված «Մուսավաթ» կուսակցությունը:

Արդեն 1980-ական թթ. կեսերին այդ կազմակերպությունների շնորհիվ ամերիկյան, թուրքական եւ արեւմտաեվրոպական հատուկ ծառայությունները ակտիվ կերպով ներթափանցեցին Ադրբեջան՝ կապեր հաստատելով վերելք ապրող ազգայնական շարժման եւ, մասնավորապես, «Ադրբեջանի ազգային ճակատի» ակտիվիստների հետ: Ըստ որոշ տեղեկությունների՝ 1979թ. ստեղծված «Ադրբեջանական ազգային կոմիտեի» անդամների միջոցով թուրքական հատուկ ծառայությունները 1980-ական թթ. վերջին «մշակման» էին ենթարկել ներկայումս Ադրբեջանում բավականին հայտնի քաղաքական գործիչների՝ Իսա Ղամբարին, Էթիբար Մամեդովին, Ջուրդուշտ Ալիզադեին, հանգուցյալ Աբուլֆազ Էլչիբեյին եւ այլոց:

Ադրբեջանական սփյուռքի նույն կազմակերպությունները շոշափելի դերակատարություն են ունեցել Արցախյան պատերազմի ժամանակ՝ շատ

հաճախ ստանձնելով կամուրջի դեր Ադրբեջանին թուրքական ուժային կառույցների ցուցաբերած օգնության հարցում: Նրանք նաեւ կոնկրետ դերակատարություն են ունեցել Բաքվի մոտ գտնվող Գյուլդեկ, Նասսուհի, Շիխովո բնակավայրերի եւ Բելոկանի քաղաքի մոտ գործող ռազմա-ուսումնական կենտրոնների գործունեության խնդրում:

Ադրբեջանական սփյուռքի հիմնական կառույցները

Ադրբեջանական սփյուռքով Բաքվում պետական մակարդակով սկսեցին զբաղվել միայն 2000-ական թթ. սկզբներից: 2001թ. մայիսի 23-ին լույս աշխարհ եկավ Ադրբեջանի այն ժամանակվա նախագահ Յեյդար Ալիևի հրամանագիրը «Աշխարհի ադրբեջանցիների առաջին համագումարի անցկացման մասին»: Համագումարը կայացավ նույն թվականի նոյեմբերի 9-10-ը Բաքվում՝ 36 երկրներից հավաքված մոտ 1.150 պատվիրակների ու Ադրբեջանի նախագահի մասնակցությամբ: Թեեւ համագումարի ավարտին խոսք էր գնում «Աշխարհի ադրբեջանցիների համակարգող խորհրդի» ստեղծման մասին, որի առաջնային նպատակներից մեկը պետք է լիներ միջազգային ուժի կենտրոններում ադրբեջանական լրբբի ստեղծման աշխատանքը, սակայն հետագայում, հարցի վերաբերյալ ի հայտ եկած տարակարծությունների արդյունքում՝ «համակարգող խորհրդի» գաղափարը հանգեց սոսկ Արտերկրում բնակվող ադրբեջանցիների հարցերով զբաղվող պետական կոմիտեի ստեղծմանը՝ Յեյդար Ալիևի 2002թ. հուլիսի 5-ի հրամանագրով:

Համաձայն կոմիտեի ներկայացրած տվյալների, անցած ժամանակահատվածում այն կարողացել է կազմակերպչական շոշափելի աշխատանքներ տանել մի շարք երկրներում գտնվող ադրբեջանական համայնքների համակարգման եւ տեղերում առկա կառույցներն ավելի գործուն դարձնելու ուղղությամբ: Կոմիտեի աջակցության շնորհիվ անցած երեք տարիներին Եվրոպայում ու Մերձավոր Արեւելքում ստեղծվել են ադրբեջանական հասարակական ավելի քան 80 կառույցներ: 2003թ. ապրիլին Գերմանիայի Մայնց քաղաքում կայացել է աշխարհի ադրբեջանական համայնքների կազմակերպությունների ղեկավարների Առաջին համաժողովը, իսկ 2004թ. մայիսին Բեռլինում հիմնադրվել է «Եվրոպայի ադրբեջանական կոնգրես» կազմակերպությունը:

Եթե փորձենք ընդհանրացնել, ապա կոմիտեն իր հիմնական առաքելությունը տեսնում է սփյուռքում գործող ադրբեջանական կառույցների համակարգման մեջ՝ գերնպատակ ունենալով ադրբեջանական միջազգային լրբբիստական ցանցի ստեղծումը եւ դրա արդյունավետ կառավարումը:

Կոմիտեի գործունեության չհայտարարված մասը կազմում է Բաքվի օգտին լրտեսական աշխատանքի վարումը: Ըստ որոշ տեղեկությունների՝ ադրբեջանա-իսրայելական հատուկ ծառայությունների համագործակցության տարրերից մեկն էլ հրեական լոբբիստական եւ հետախուզական կառույցների փորձի փոխանցումն է Բաքվի իրենց գործընկերներին (մասնավորապես, իսրայելական «Մոսադը» Իրանի դեմ հետախուզական գործունեության հարցում հատուկ տեղ է հատկացնում նաեւ Ադրբեջանի հետախուզական մարմինների միջոցով Իրանի ադրբեջանական համայնք ներթափանցմանը):

Մերձավոր Արեւելքում, նախկին Խորհրդային Միության տարածքում, Եվրոպայում եւ Հյուսիսային Ամերիկայում առկա ադրբեջանական սփյուռքի համակարգման ավելի ընդգրկուն փորձ արվել էր դեռեւս պաշտոնական Բաքվի վերը նշված նախաձեռնություններից մի քանի տարի առաջ: 1997թ. Միացյալ Նահանգներում ստեղծվեց Աշխարհի ադրբեջանցիների կոնգրես (ԱԱԿ) կազմակերպությունը: Նույն՝ 1997թ., Լոս Անջելեսում կայացավ նրա առաջին համագումարը: Կազմակերպության ղեկավար մարմիններում գերակշռում են տարբեր տարիների Իրանից արտագաղթած ադրբեջանցիները: ԱԱԿ նախագահն է Ջավադ Դերյախտին:

Անգամ բուն Ադրբեջանում առկա մի շարք հրապարակումների համաձայն, կազմակերպության ստեղծման եւ ընթացիկ ֆինանսավորման գործում որոշակի դերակատարություն ունեն ամերիկյան հատուկ ծառայությունները: Արդեն 1990-ական թթ. կեսերից իրանական թեման Վաշինգտոնի արտաքին քաղաքականության մեջ կրկին ստանում էր առաջնահերթի կարգավիճակ, ուստի նոր ճնշամիջոցի ձեռքբերումը Թեհրանի նկատմամբ կարող էր միայն նպաստավոր լինել ամերիկյան քաղաքականության համար:

Մյուս կողմից՝ ԱԱԿ նկատմամբ անտարբեր չեն նաեւ իրանական հատուկ ծառայությունները, որոնց հիմնական նպատակն է ոչ թե նվազեցնել ԱԱԿ-ից եկող հավանական վտանգը, այլ՝ իրանական ազդեցության ներքո գցել կազմակերպությունը: Եղել են դեպքեր, երբ ԱԱԿ ղեկավար մարմնի այս կամ այն անդամը մեղադրվել է իրանական հետախուզության հետ համագործակցելու մեջ: Ըստ ամենայնի, պետք է այդ լույսի ներքո դիտարկել 2003թ. աշնանից ԱԱԿ ներսում ի հայտ եկած տարածայնությունները: Նախկինում կազմակերպության Բաքվի բաժանմունքի, իսկ հետագայում ԱԱԿ մամլո ծառայության ղեկավար Թեյմուր Էմինբեյլիի գլխավորությամբ ԱԱԿ ղեկավար խորհրդի մի շարք անդամներ 2004թ. հունվարի 30-ից փետրվարի 1-ը Ստրասբուրգում անցկացրին ԱԱԿ հերթական՝ յոթերորդ համագումարը, որի արդյունքում ԱԱԿ

նախագահ ընտրվեց Մուհամեդ Ռզա Խեշտին: Սակայն պաշտոնական Բաքուն ճանաչում է Ջ.Ղերյախտիի գլխավորած կազմակերպությունը:

Ի սկզբանե Ռուսաստանի ադրբեջանական համայնքը Բաքվի կողմից դիտարկվում էր որպես սփյուռքի ուղղությամբ տարվող աշխատանքների գլխավոր նպատակակետ: Պատճառն, անշուշտ, այդ երկրում հանգրվանած միլիոնավոր ադրբեջանցիներն էին եւ այն հանգամանքը, որ այդ զանգվածը մշակութային առումով առայժմ նույնն է, ինչ Ադրբեջանի բնակչությունը (օրինակ՝ ի տարբերություն իրանաբնակ ադրբեջանական համայնքի):

Մյուս կողմից՝ 2000-ական թթ. սկզբներից ԱՊՀ երկրների նկատմամբ վարվող Մոսկվայի քաղաքականության մեջ ավելի ակնառու դարձան Ռուսաստանում գտնվող համայնքները որպես լծակ օգտագործելու տարրերը: Բացառություն չէր նաեւ Ադրբեջանը:

2001թ. հոկտեմբերի 4-ին Մոսկվայում Ռուսաստանի ու Ադրբեջանի նախագահներ Վլադիմիր Պուտինի եւ Չեյդար Ալիևի մասնակցությամբ կայացավ Համառուսաստանյան ադրբեջանական կոնգրեսի (ՀԱԿ) հիմնադիր համագումարը: Կոնգրեսի ղեկավար մարմնում ներառված են Ռուսաստանի գործարար, մշակութային, իրավական բնագավառները ներկայացնող՝ ազգությամբ ադրբեջանցի մի շարք գործիչներ («ԼուկՕՅԼ» նավթային հսկայի նախագահ Վազիթ Ալեքսեյովը, Մոսկվայում գործող «Կինոգործիչների միջազգային միության» նախագահ Ռուստամ Իբրահիմբեկովը եւ այլք): Կազմակերպության նախագահն է Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, բժշկական գիտությունների դոկտոր Սամեդ Բադիր Ջավադ-օղլու Ալիևը: Չնայած այն հանգամանքին, որ ներկայումս Ռուսաստանում գործում են այդ երկրի ադրբեջանական համայնքը ներկայացնող բազմաթիվ կազմակերպություններ, սակայն ՀԱԿ-ը, փաստորեն, համարվում է մայր կազմակերպություն:

Ըստ որոշ տեղեկությունների՝ դեռեւս 2002թ. գարնանը հանգուցյալ նախագահ Չեյդար Ալիևի ցուցումով Ադրբեջանի նախագահական աշխատակազմում ստեղծվել էր հատուկ մի հիմնադրամ, որի տրամադրության ներքո կուտակվող միջոցները պետք է ծառայեին Ռուսաստանի հասարակական-քաղաքական, մշակութային ազդեցիկ ներկայացուցիչների հետ համապատասխան «աշխատանքների» վարմանը, ռուսական ՋԼՍ-ում PR-ակցիաների կազմակերպմանը, Ադրբեջանին վնասող տեղեկատվության չեզոքացմանը եւ այլն: Այդ առումով, որպես գործառնական մեխանիզմ հանդես էր գալու ՀԱԿ-ը: Պատահական չէ, որ ստեղծվելուց շատ չանցած ՀԱԿ-ը կազմավորեց իր սեփական տեղեկատվական-վեր-

լուծական կառույցը, որն իրականում զբաղված է հատուկ ծառայություններին բնորոշ գործունեությամբ: Հատկանշական է, որ ռուսական մանուլի ներկայացմամբ, ՀԱԿ ֆինանսական միջոցներով զբաղվում են Ադրբեջանի Ազգային անվտանգության նախարարության Առաջին վարչության (պատասխանատու է հետախուզության համար) աշխատակիցները, իսկ ՀԱԿ ֆինանսական միջոցների մի զգալի մասը ձեւավորվում են ռուսական քրեական դաշտում գործող ադրբեջանական հանցավոր խմբերի հատկացումներից:

Հետևություններ

Այսօր որպես ադրբեջանական սփյուռքը միավորող գաղափարներ ներկայացվում են բաժանված ազգ լինելու (1828թ. Թուրքմենչայի պայմանագրի արդյունքում) եւ Ղարաբաղի «ազատագրման» դրույթները: Այդ իմաստով փորձ է արվում ազգային նպատակ հռչակել «Մեծ Ադրբեջանի» ստեղծումը:

Ընդհանուր առմամբ, ադրբեջանական սփյուռքը դեռեւս գտնվում է ձեւավորման նախնական փուլում: Այդ առումով, գոյություն ունի բաժանարար հստակ գիծ հետխորհրդային ադրբեջանցիների եւ պատմականորեն խորհրդային Ադրբեջանի հետ կապ չունեցող (օրինակ՝ իրանական կամ թուրքական ադրբեջանական համայնքներ) ադրբեջանցիների միջև:

Վերոհիշյալի լույսի ներքո կարելի է ասել, որ առայժմ պաշտոնական Բաքուն կարողանում է որոշակի հաջողությունների հասնել միայն ադրբեջանական «հարազատ» համայնքների հետ շփման գործում: Մյուս կողմից՝ օրինակ, ծագումով իրանական ադրբեջանցիների շրջանում ավելի շատ ներկայացված է Թեհրանը, քան Բաքուն:

Եթե ընդունենք այն տեսակետը, որ այսօր ողջ աշխարհում բնակվող ադրբեջանցիների թիվը կազմում է 35-40 միլիոն եւ այն իրողությունը, որ այսօր Ադրբեջանը հայտնվել է ռազմավարական բնույթ ունեցող մի շարք միջազգային գործընթացների գրեթե կիզակետում, ապա տարօրինակ չպետք է թվա այն հանգամանքը, որ մեծ տերությունները շահագրգռված են տիրանալ ադրբեջանական սփյուռք կոչվող «ռեսուրսին»:

Այսօրվա պաշտոնական Բաքվի համար կարելու է ներգրավված լինել ադրբեջանական սփյուռքի շուրջ ընթացող զարգացումներում՝ ոչ միայն «ներկա գտնվելու» կամ «ռեսուրսին» տեր կանգնելու նպատակով, այլեւ՝ այնտեղից (մասնավորապես, Ռուսաստանի համայնքից) եկող հավանական սպառնալիքները չեզոքացնելու համար:

**ԱՐԽԱԶԻԱՅՈՒՄ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՉԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ
Կարեն Վերանյան**

Այսօր կարելի է հաստատապես ասել, որ Աբխազիայում թուրքական գործոնը մրցակցային մարտահրավեր է նետել Ռուսաստանին, թեև վերջինս այստեղ իր ազդեցության ընդլայնման հարցում, ամշուշտ, տիրապետում է զգալի ռեսուրսների: Աբխազիայում թուրքական ազդեցության հեռանկարները եւ արդյունքում՝ հնարավոր աշխարհաքաղաքական վերադասավորումներն առանցքային դերակատարում ունեն նաեւ Հայաստանի տարածաշրջանային ռազմավարության, ինչպես եւ՝ արխազահայ համայնքի անվտանգության համատեքստում:

Վրացական կողմի դիրքորոշումը

Ի հակակշիռ ռուսական ազդեցության, Վրաստանի իշխանությունները բազմիցս հանդես են եկել վրաց-արխազական հակամարտության գոտում խաղաղապահ առաքելության միջազգայնացման օգտին՝ չբացառելով վերջինիս կազմում թուրքական ռազմական ստորաբաժանումների մասնակցության հնարավորությունը: 2001թ. նոյեմբերի 9-ին Վրաստանում Թուրքիայի նախագահ Սեզերի հետ հանդիպումից հետո կայացած մամլո ասուլիսին Վրաստանի նախագահ էդ. Շեարդնաձեն հայտարարեց, որ «եթե ՄԱԿ Անվտանգության խորհուրդը համաձայնի վրաց-արխազական հակամարտության գոտի մտցնել միջազգային ուժեր, ապա Թբիլիսին կառաջարկի Անկարային դիտարկել դրանցում թուրքական գործերի մասնակցության հնարավորությունը»:

Չնայած դրան՝ վրացական կողմն արխազական զարգացումներում թուրքական ազդեցության ընդլայնման հարցին լուրջ վերապահումներով է մոտենում: Վրաստանը մեկ անգամ չէ, որ հանդես է եկել երկրի ներքին գործերին միջամտելու՝ թուրքական կողմին հասցեագրված քննադատություններով եւ համապատասխան արձագանքներով: Մասնավորապես, վրացի սահմանապահները Վրաստանի տարածքային ջրերի խախտման մեղադրանքով բազմիցս կալանել են Սեւ ծովով Աբխազիա ելումուտ անող թուրքական բեռնանավերը: Սակայն ոչ միայն դա. դեռեւս 2001թ. հոկտեմբերին Վրաստանի պաշտպանության նախարար Թենգիզ Կիտովանին Աբխազիայից ռուսական խաղաղապահների դուրսբերմանը

կողմնակից լինելով, միաժամանակ մատնանշում էր այստեղ թուրքական ռազմական ներկայության հաստատման վտանգը: Նա, մասնավորապես, հայտարարեց, որ «*Թուրքիան Աբխազիայի նկատմամբ ունի բարձր մակարդակի ռազմավարական շահեր, որը չի համապատասխանում Վրաստանի ազգային շահերին, ուստի անթույլատրելի է Աբխազիա թուրքական զորքերի մուտքը*»:

Պաշտոնական Թբիլիսին խանդով է ընկալում Աբխազիայում թուրքական ազդեցության ամրապնդումը նաեւ մշակութային ասպարեզում՝ ելնելով հետեւյալ տրամաբանությունից. նախ՝ իսլամը բավական խորթ է վրացական կրոնամշակութային, բարոյագաղափարական ինքնությանն ու ազգային ավանդույթներին, երկրորդ՝ թուրքական մշակութային ներգրավումը նոր ակտիվություն կբերի վրացաբնակ ադրբեջանցիների շրջանում՝ ընդհուպ մինչեւ իրադրության ապակայունացում: Դա կարող է նաեւ նոր լիցք հաղորդել Վրաստան թուրք-մսխեթցիների վերադարձի հարցի ակտիվացմանը:

Սուխումի իշխանությունների մոտեցումը

Չնայած երկրի ղեկավարությունը շարունակում է Ռուսաստանը դիտել որպես Աբխազիայի անվտանգության հիմնական երաշխավոր, այնուամենայնիվ, կողմ է թուրք-աբխազական հարաբերությունների զարգացմանը՝ երկու հիմնական պատճառով. նախ՝ առայսօր միջազգայնորեն չճանաչված հանրապետության պետականության կայացման գործընթացում առանցքային նշանակություն է ստանում երկրի արտաքին բազմավեկտոր քաղաքականության ապահովման խնդիրը, եւ երկրորդ՝ Թուրքիայի հետ հարաբերությունների ամրապնդումն էապես կնպաստի Ռուսաստանից Աբխազիայի կախվածության սահմանափակմանը:

Թուրք-աբխազական հարաբերությունների զարգացման հեռանկարները աբխազական կողմն օրակարգ է մտցրել դեռեւս վրաց-աբխազական պատերազմի տարիներին, երբ 1992թ. հոկտեմբերի 7-ին Լիխնի գյուղում կայացած Աբխազ-աբազինական ժողովրդի առաջին համաշխարհային կոնգրեսի նիստին Աբխազիայի այլեւս նախկին նախագահ Վ.Արձինբան կոչ արեց՝ Ռուսաստանից զատ, զարգացնել հարաբերությունները Թուրքիայի հետ: Նա, մասնավորապես, առաջարկեց՝

❖ *Աբխազիայի ուսումնական հաստատություններում կազմակերպել թուրքերենի ուսուցում,*

❖ *անցկացնել թուրքերենի ուսուցման դասընթացներ բոլոր ցանկացողների համար,*

❖ *Սուխումում բացել թուրքական գրադարան:*

Չնայած արխագական կողմի դիրքորոշմանը՝ զարգացնել թուրք-արխագական հարաբերությունները, այնուամենայնիվ, սկզբունքային որոշ հարցերում վերապահուններն առավել քան ակնհայտ են: Մասնավորապես, խոսքը վերաբերում է հակամարտության զոտու խաղաղապահ առաքելության հավանական միջազգայնացմանը Թուրքիայի մասնակցությամբ, որի կապակցությամբ Արխագիայի ղեկավարությունը, ի տարբերություն վրացական կողմի, սկզբունքորեն բացասական դիրքորոշում ունի: Դեռևս 2003թ. սեպտեմբերի կեսերին Արխագիայի ԱԳ նախարար Սերգեյ Շամբան հայտարարեց, որ «Արխագիայում տեղակայված խաղաղապահ ստորաբաժանումների կազմի ընդլայնումը՝ ի հաշիվ Թուրքիայի, անընդունելի է»: Ռազմաքաղաքական խնդիրներից բացի, արխագական կողմը բավական զգուշավորությամբ է մոտենում նաև երկրում թուրքական մշակութային ազդեցության ընդլայնման հեռանկարներին: Փաստենք, որ Արխագիայում առայսօր չի գործում ոչ մի մզկիթ: Երկրում հիմնադրվել են միայն երկու իսլամական աղոթատեղիներ, որոնք չունեն մզկիթի կարգավիճակ: Աղոթատեղիներից մեկը հիմնադրվել է 1998թ. մայրաքաղաք Սուխումում, իսկ երկրորդ աղոթատեղին 2002թ. բացվեց Գուդաուք քաղաքում՝ տեղի իսլամադավան բնակիչների խնդրանքով:

Արխագիայում թուրքական ազդեցության ընդլայնման նախադրյալները

Թուրքական կառավարությունը բավական հետեւողական է Արխագիայում թուրքական մշակութային տարրերի ներմուծման ու ընդլայնման խնդիրներում: Թուրքիայի կառավարությունը, մասնավորապես, մեծ ուշադրություն է դարձնում Արխագիայում իսլամի, ինչպես նաև թուրքերենի տարածմանը: Երկրում իսլամի տարածումը կարող է զգալիորեն նեղացնել ուղղափառ քրիստոնեության ազդեցության շրջանակները, ինչը բացասաբար կանդրադառնա Արխագիայում ռուսական մշակութային տիրապետության վրա: Ավելին, Արխագիայում թուրքական մշակութային դիրքերի ակտիվացումը կնպաստի պանթուրքական-պանիսլամական գաղափարախոսության կիրառմանը Կովկասի մյուս շրջաններում եւս, ինչի ուղղությամբ Թուրքիայի կառավարությունը բավական հետեւողական քաղաքականություն է վարում:

Անհրաժեշտ է արձանագրել եւս մեկ կարեւորագույն իրողություն. Թուրքիայի կառավարությունը քաղաքական, ֆինանսական լուրջ աջակցություն է ցուցաբերում թուրք մտավորականության պատմագիտական փորձերին՝ կովկասյան ժողովուրդների պատմամշակութային, ազգագրա-

կան Անկարագրին տալու թյուրքական արմատներ: Այս առումով՝ բնորոշ փորձ պետք է համարել Թուրքիայի Սաքարիա համալսարանի դոցենտ Ալաեդդին Յալչընքայայի՝ 2005թ. մարտին լույս տեսած «Կովկասում «թյուրքական» ցեղերը» խորագրով հոդվածը, որում հեղինակը, մասնավորապես, նշում է. «Կովկասում ու Բալկաններում կան խմբեր, որոնք թեև արմատով թյուրք չեն, սակայն, որպես մահմեդական, իրենց ապագան կապում են Թուրքիայի հետ ու ազգությամբ թյուրք ժողովուրդներից ավելի շատ են կապված Թուրքիայի հետ՝ ինչպես, օրինակ, չերքեզները, աբխազները, չեչենները, բոսնիացիները»:

Վերջին տասնամյակում Աբխազիայում զգալի ակտիվություն են սկսել ցուցաբերել թուրք գործարարները: Աբխազիայում թուրքական տնտեսական գործոնի ակտիվացման համար էական նշանակություն ունեցավ վրաց-աբխազական ռազմական գործողությունների հետեւանքով կողմերի միջու սահմանի փակման հանգամանքը, ինչի արդյունքում Աբխազիայի իշխանությունները սկսեցին զգալի ուշադրություն դարձնել երկրի ծովային հաղորդակցության խնդիրներին:

Աբխազիայի տնտեսությունում թուրքական ընկերությունների զգալի մասը մասնագիտացած է, մասնավորապես, ածխի արդյունահանման ու վերամշակման ոլորտում: Ոչ պաշտոնական աղբյուրների համաձայն՝ Աբխազիայի իշխանությունները երկրի տնտեսության այս բնագավառում գործող թուրքական ընկերությունների հետ ստորագրել են Թքվարչալի (Աբխազիա) ածխի արդյունահանման շուրջ երկու նախագիծ-պայմանագիր՝ 10 տարի ժամկետով: Բացի այդ, թուրք գործարարները ակտիվ են Աբխազիայի անշարժ գույքի առքուվաճառքի հարցերում: ՁԼՍ-ում տեղ գտած հաղորդագրությունների համաձայն՝ թուրք անհատ ձեռներեցները մայրաքաղաք Սուխումի կենտրոնական շրջաններում վարձակալում կան գնում են հողատարածքներ, կառուցում են սրճարաններ, առետրի կենտրոններ: Բնականաբար, տնտեսական ոլորտում թուրք անհատ ձեռներեցների ներգրավվածությունը ենթադրում է հեռանկարային քաղաքական շահեր եւ ամեն տեսակ աջակցություն է ստանում պաշտոնական Անկարայի կողմից:

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է 2008-ԻՆ Գագիկ Տեր-Յարությունյան

Այսօրվա աշխարհակարգի տրամաբանությունը՝ առավել քան նախկինում, թելադրում է, որպեսզի ինքնիշխան պետության քաղաքականությունը համարժեք լինի իրեն նետված մարտահրավերներին: Այս առումով դիտարկման արժանի է Ռուսաստանի 2005թ. ռազմավարությունը, որը կարծես թե արձագանք էր նախորդ տարիներին կրած անհաջողությունների: Վերջիններիս շարքում պետք է առանձնացնել հեղաշրջումները Վրաստանում եւ Ուկրաինայում. հայտնի է, որ դրանց հետեւանքով այդ երկրները վարում են ընդգծված հակառուսաստանյան քաղաքականություն: Ավելին, 2008-ին նախատեսված նախագահական ընտրությունների համատեքստում ինքը՝ Ռուսաստանը, ապահովագրված չէ նման «հեղափոխական» զարգացումներից:

«Գունավոր հեղափոխությունները», մասնավորապես, ի հայտ բերեցին արեւմտյան մանիպուլյացիոն տեխնոլոգիաների գերազանցությունը եւ Ռուսաստանի տեղեկատվական քաղաքականությունում (ելենելով այս եզրի լայն մեկնաբանությունից) տեղ գտած լուրջ թերացումները: Նման տեխնոլոգիաներին դիմակայելու համար ռուսական կողմը ոչ միայն չունի քարոզչություն իրագործող արդյունավետ միջոցներ, այլեւ հստակեցված չէ նման քարոզչության գաղափարական հենքը:

Ներկայիս զարգացումները վկայում են այն մասին, որ Ռուսաստանի քաղաքական ընտրանին կարծես թե ըմբռնել է տեղեկատվական քաղաքականության կարեւորությունը եւ փորձում է շտկել այդ ոլորտում տիրող անմխիթար իրադրությունը:

Փոփոխություններ տեղեկատվական դաշտում

Վերջին մի քանի տարում գլոբալ տեղեկատվական դաշտում կտրուկ աճել է Ռուսաստանը եւ Պուտինի վարչակազմը փնտվող նյութերի քանակը: Այդ երկիրը եւ նրա ժողովուրդը ներկայացվում են ամենամռայլ գույներով, իսկ «ԿԳԲ գնդապետ» Պուտինը՝ որպես ֆաշիստ եւ Ստալինի հետեւորդ: Նման հրապարակումների անգամ հպանցիկ վերլուծությունը խոսում է այն մասին, որ ՌԴ ներկայիս իշխանությունների քաղաքական

գիծը չի համապատասխանում, մասնավորապես, ԱՄՆ շահերին, եւ այդ պատճառով Ռուսաստանի դեմ վարվում է լայնածավալ տեղեկատվական պատերազմ: Ինչպես գրում է ԱՄՆ «Պաշտպանական ինֆորմացիայի կենտրոնի» ռուսաստանյան ծրագրերի տնօրեն Ն.Ջլոբինը, «*Երբեւիցե ԽՍՀՄ փլուզումից հետո ԱՄՆ ընտրանու վերաբերմունքը դեպի Ռուսաստանը չէր փոխվել այնքան կտրուկ, ինչպես դա տեղի ունեցավ 2004թ.-ին... այդ ընտրանու ճնշող մեծամասնությունը համոզված է, որ Մոսկվան կայսերական նկրտումներ ունի, որոնք արտահայտվում են առնվազն նախկին ԽՍՀՄ տարածքում...»*: Հատկանշական է, որ ոչ միայն օտարերկրյա, այլեւ ՌԴ ՋԼՄ մի մասը հաճախ հանդես է գալիս ռուսաստանյան ազգային շահերի դեմ (տեղեկատվական պատերազմների եզրաբանությունում դա կոչվում է «պատերազմ սեփական ժողովրդի դեմ»):

Իրադրությունը շտկելու նպատակով ռուսաստանյան իշխանությունները 2005-ին իրար հետեւից հիմնեցին 3 հեռուստակայան: Դրանցից առաջինը՝ անգլերեն սփռվող «Russia Today»-ը, պետական լրատվական հեռուստակայան է եւ նախատեսված է արտասահմանում Ռուսաստանի կերպարը (հմիջը) լավագույնս ներկայացնելու համար: Կայանի տնօրենն է 24-ամյա Մարգարիտա Սիմոնյանը, իսկ բյուջեն կազմում է մոտ \$30 մլն: Երկրորդը՝ Պաշտպանության նախարարության հիմնադրած ռազմահայրենասիրական «Ջվեզդա»-ն է, որի խնդիրն է ռուսաստանյան հանրության մոտ գովազդել իր գրավչությունը կորցրած երկրի զինված ուժերը: Երրորդը «Սպաս» հեռուստակայանն է, որի աշխատանքներին մասնակցում են ազգային կողմնորոշում ունեցող անվանի քաղաքագետներ Նատալյա Նառոչնիցկայան եւ Ալեքսանդր Դուգինը: Այս կայանի խնդիրները գաղափարախոսական-հոգեւոր բնույթի են. բնորոշ է, որ «Սպասը» ֆինանսավորում է հայտնի բանկիր եւ արդյունաբերող Գեոնադի Լիսակը, որը նաեւ մոլեռանդ ուղղափառ է: Վերջին հանգամանքը պատահական չէ, քանի որ նոր ձեւավորվող ռուսական գաղափարախոսությունում ուղղափառությունը մեծ դերակատարում ունի:

Վերոհիշյալ քայլերը կատարելով՝ Կրեմլը փորձում է բարձրացնել իր մրցունակությունը տեղեկատվական դաշտում: Առայժմ վաղ է խոսել արդյունքների մասին, քանի որ հիշյալ հեռուստակայանները դեռ նոր են սկսում իրենց գործունեությունը: Նկատենք նաեւ, որ տեղեկատվության ոլորտում ամերիկյան գերակայության դեմ փորձում է պայքարել ոչ միայն Ռուսաստանը. նույնաման նպատակներ հետապնդող հեռուստակայաններ են հիմնել նաեւ Ֆրանսիան եւ Վենեսուելան:

Հասարակական կազմակերպությունները վերահսկելու փորձ

Հայտնի է, որ «հեղափոխական» գաղափարախոսության կրողների դերում հանդես են գալիս տարաբնույթ հասարակական կազմակերպություններ: ՀԿ-ներն այսօր կարելի է դերակատարում ունեն մարդու եւ հանրության կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում: ՄԱԿ տվյալներով՝ աշխարհում գործում են մոտ 27 հազար միջազգային ՀԿ, որոնց նշանակությունը ներկայիս «բաց սահմանների» պարագայում դժվար է գերազնահատել: Ակնհայտ է նաեւ, որ ՀԿ-ների գործունեությունը միշտ չէ, որ կրում է կառուցողական բնույթ:

Վերջերս Ռուսաստանի Պետդուման առաջին ընթերցմամբ ընդունեց (370 կողմ եւ ընդամենը 18 դեմ) «Հասարակական միությունների մասին» եւ «Շահույթ չիտապնդող կազմակերպությունների մասին» օրենքների փոփոխությունները: Խնդրի հրատապության մասին է խոսում այն փաստը, որ Ռուսաստանում գործում են 400.000-ից 600.000 ՀԿ, որոնց մի զգալի մասին, համաձայն ՁԼՄ-ում բերված տվյալների, ֆինանսավորում են օտար, գլխավորապես արեւմտյան երկրները (որոշակի տոկոս են կազմում նաեւ, այսպես կոչված, «մահմեդական ՀԿ-ները»): Օրենքների փոփոխման արդյունքում իշխանությունները կստանան լայն իրավասություններ՝ վերահսկելու ՀԿ-ների ֆինանսական եւ քաղաքական գործունեությունը: Օրենքների հնարավոր փոփոխությունները ենթադրում են, որ այսուհետ անգամ միջազգային կազմակերպության կարգավիճակ ունեցող ՀԿ-ները պետք է վերագրանցվեն (այդ գործառույթը պետք է խստանա)՝ որպես ռուսաստանյան իրավաբանական անձ, իսկ ՌԴ-ում մշտապես չբնակվող օտարերկրացիները ՀԿ հիմնադրելու իրավունք չունեն: Օրինազօծի հեղինակները, ինչպես նաեւ ինքը՝ Պուտինը, տարբեր ամբիոններից հնչեցրին, թե որոշ ՀԿ-ներ այլ տերությունների համար գործիք են հանդիսանում՝ Ռուսաստանում իրենց քաղաքական նպատակներին հասնելու համար:

Ռուսաստանյան իշխանությունների կողմից ՀԿ-ների նկատմամբ վերաբերմունքի կոշտացումը նկատվում է վաղուց: Նախորդ տարիներին իրավապահ մարմինները հետաքննություններ էին ձեռնարկել դրանցից մի քանիսի նկատմամբ. մասնավորապես՝ ՁԼՄ-ում լայնորեն արծարծվում էին «Բրիթիշ կոնսուլ» եւ «Խաղաղության կորպուս» կազմակերպությունների անունները, որոնցից վերջինը մեղադրվում էր նաեւ հետախուզական գործունեության մեջ: Հատկանշական է, որ ՀԿ-ների նոր օրենքի առիթով

ընթացող բանավեճերից մեկում ՖՍԲ տնօրեն Պատրուշեւը մեղադրեց ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությանը (USAID), որը *«սկսել է իրագործել ծրագրեր՝ ուղղված պետական համակարգի փոփոխման եւ ռուսաստանյան տեղեկատվական դաշտի վրա վերահսկում սահմանելու ուղղությամբ»*:

Որոշ ՅԿ-ներ այսօր իրոք վերածվել են միջազգային քաղաքականության կարեւոր գործոնների: Մինչդեռ դրանց մի մասի վարկն այսօր ավելի քան ցածր է: Օրինակ, «Դեմոկրատիայի ազգային հիմնադրամը» (NED), որը «նեոկոնսերվատորների» շտաբ-կայաններից մեկն է, մեղադրվում է 2002-ին Վենեսուելայում հեղաշրջում կազմակերպելու փորձի մեջ, իսկ հանրահայտ Freedom House-ի ղեկավար, նախկինում ԿՅՎ տնօրեն Ջեյմս Վուլփին շարունակաբար կոչ է անում սկսել 4-րդ Յամախարային պատերազմ «իսլամոֆաշիզմի» դեմ: Նման օրինակները կարելի է շարունակել, բայց այսօր արդեն ակնհայտ է, որ շատ ՅԿ-ներ հիշեցնում են հատուկ առաջադրանքներ կատարող ջոկատներ կամ աղանդավորական խմբեր:

Պետդումայում ընդունված ՅԿ-ների մասին օրենքի նախագիծը լայն միջազգային արձագանք է ստացել: Այն դարձել է ոչ միայն համաշխարհային ՁԼՄ քննարկման նյութ, այլև բանակցությունների թեմա Պուտին–Բուշ վերջին հանդիպման ժամանակ: Օրինագծի դեմ բողոքում են նաև ՌԴ-ում տեղակայված արեւմտյան ՅԿ-ները. դրանցից մի քանիսը, օրինակ՝ «Ֆորդի հիմնադրամը» եւ հանրահայտ «Մարդու իրավունքների վերահսկում» (Human Rights Watch) կազմակերպությունը հայտարարեցին, որ փակելու են իրենց գրասենյակները Ռուսաստանում: Ճնշումները ստիպեցին գործադիր իշխանություններին վերանայել օրինագիծը. այդ կապակցությամբ նախագահ Պուտինն արտահայտվեց այն ոգով, թե անհրաժեշտ է, որպեսզի հաշվի առնվեն «եվրոպական գործընկերների եւ Ռուսաստանի ՅԿ-ների ներկայացուցիչների» մոտեցումները:

Անկախ նրանից, թե ինչով կավարտվեն նախագծի հետ կապված բանավեճերը, ակնհայտ է, որ ռուսաստանյան իշխանությունները սկսել են գնահատել ՅԿ-ների դերն ու կարեւորությունը: Նրանք փորձում են ոչ միայն սահմանափակել անցանկալի ՅԿ-ների գործունեությունը, այլև ստեղծել «իրենց» ՅԿ-ները եւ օգտագործել դրանք սեփական խնդիրները լուծելու համար՝ ինչպես Ռուսաստանում, այնպես էլ արտերկրում. մասնավորապես, 2006թ. պետբյուջեից մոտ \$18 մլն է տրամադրվելու այլ երկրներում «ժողովրդավարությունը ամրապնդելու» նպատակով: Անշուշտ, այդ գումարը չի կարող համեմատվել Արեւմուտքի կողմից ՅԿ-ներին տրամադրված հսկայական միջոցների հետ, սակայն ակնհայտ է, որ Ռուսաս-

տանը փորձում է յուրացնել ժամանակակից քաղաքական տեխնոլոգիաները:

Սակայն ներքին դաշտում իշխանությունների կատարած ջանքերն ապարդյուն կանցնեն, եթե չլուծվի այսօրվա Ռուսաստանի կարելորագույն հիմնահարցը՝ պուտինյան քաղաքական գծի շարունակականության ապահովումը:

Իրավահաջորդի խնդիրը

Ինչպես հայտնի է, վերջերս նախագահ Պուտինը կադրային նոր փոփոխություններ կատարեց. նա իր աշխատակազմի ղեկավար Դմիտրի Մեդվեդեևին (որին քաղաքական ընտրանու շրջանակներում երբեմն «վեզիր» են անվանում) նշանակեց վարչապետի առաջին տեղակալ, իսկ նրա տեղը Կրեմլում զբաղեցրեց Տյումենի նահանգապետ Սերգեյ Սոբյանինը: Մեկ այլ հրամանագրով Սերգեյ Իվանովը, պահպանելով պաշտպանության նախարարի իր բարձր կարգավիճակը, նույնպես նշանակվեց վարչապետի առաջին տեղակալ:

Կատարված փոփոխությունները լայն քննարկումների առիթ հանդիսացան: Համաձայն մեկնաբանների՝ նշանակումներն ընդգծեցին այն անձանց անունները, որոնք (առաջին հերթին նկատի ունենալով Մեդվեդեևին) հնարավոր է, որ 2008-ին փոխարինեն Պուտինին: Անշուշտ, Մեդվեդեևը եւ Իվանովը պատկանում են Պուտինի «նեղ շրջապատին» (որին պատկանում է, ի դեպ, նաեւ Մեդվեդեևի համակուրսեցի Դմիտրի Կոզակը) եւ կարող են հանդես գալ որպես հնարավոր իրավահաջորդ: Թվում է, թե նախագահ դառնալու ավելի մեծ հնարավորություններ ունի Ս.Իվանովը. նա առայժմ միակ պաշտոնյան է, որը, բացի Պուտինից, հայտարարություններ է անում ռազմավարական խնդիրների շուրջ:

Միեւնույն ժամանակ, հաշվի առնելով Պուտինի անսպասելի որոշումներ ընդունելու կարողությունը (հիշենք վարչապետ Ֆրադկովի նշանակումը), առայժմ դժվար է կանխատեսել, թե ում նա մատնացույց կանի 2008-ին: Նկատենք նաեւ, որ նախագահի թիմը, ելնելով իր իսկ շահերից, կփորձի նրան այս կամ այն կարգավիճակով «պահել» քաղաքական բարձրագույն կառավարման համակարգում: Օրինակ, չի կարելի բացառել, որ Պուտինին կարող է առաջարկվել Պետխորհրդի նախագահի պաշտոնը, իհարկե, նախապես օրենսդրական փոփոխությունների միջոցով էապես ընդլայնելով այդ մարմնի իրավասությունները:

**ԱՍԻԱԿԱՆ ԽԱՂԱՑՈՂՆԵՐԸ ԷՆԵՐԳԱԿԻՐՆԵՐԻ
ՇՈՒԿԱՅՈՒՄ. ՀԱՅԱՑՔ ԱՊԱԳԱՅԻՆ
Արտակ Շաքարյան**

Շատ մասնագետներ ու վերլուծական կենտրոններ կանխատեսում են, որ տնտեսական առաջնորդությունն ապագայում կենտրոնանալու է Ասիայում: Օրինակ, ըստ «Գոլդմեն Սաքս» խմբի համաշխարհային տնտեսության վերլուծության բաժնի ղեկավար Ջիմ Օ' Նիլի՝ մեր դարի կեսերին Բրազիլիայի, Ռուսաստանի, Հնդկաստանի ու Չինաստանի համախառն ներքին արդյունքի հանրագումարը գերազանցելու է «մեծ յոթնյակի» նույն ցուցանիշի հանրագումարը: Ըստ նույն խմբի մասնագետների՝ Հնդկաստանն առաջ կանցնի ճապոնիայից 2035թ., իսկ Չինաստանը ԱՄՆ-ից՝ 2040թ.:

Այսօր արդեն ասիական տարածաշրջանը սպառում է նավթի համաշխարհային արտահանման 40%-ը: Էներգետիկ կարիքների աճը, մասնավորապես՝ բուռն զարգացում ապրող տերությունների կողմից, ապագայում ավելի ու ավելի մեծ ազդեցություն է թողնելու աշխարհաքաղաքական հարաբերությունների վրա: Համաձայն ԱՄՆ Ազգային հետախուզական խորհրդի (ԱՀԽ) 2005թ. սկզբներին գաղտնագերծված զեկույցի՝ աշխարհում էներգիայի ընդհանուր սպառումն առաջիկա 20 տարվա ընթացքում ամենայն հավանականությամբ աճելու է 50%-ով: Համեմատության համար նշենք, որ 1980-2000թթ. այդ աճը կազմել է 34%: Համաձայն նույն զեկույցի՝ նավթն ու բնական գազը մոտ ապագայում պահպանելու են էներգետիկ հաշվեկշռում իրենց ծանրակշիռ դիրքը, նորացվող էներգակիրները (արելի, քամու էներգիա եւ այլն) կազմելու են էներգիայի միայն փոքր մասը, իսկ միջուկային էներգիայի համամասնությունը կրճատվելու է:

Չինաստանն ու Հնդկաստանը երկրներ են, որոնք չունեն բավականաչափ էներգետիկ պաշարներ: Նրանք ձգտելու են իրենց համար ապահովել անընդհատ արտաքին մատակարարումներ: Չինաստանը դեռ 2003թ. նավթի սպառման ծավալի ցուցանիշով գրավեց աշխարհում երկրորդ տեղը: 2004թ. նավթի պահանջարկն այդ երկրում աճեց 17%-ով կամ 5,8-5,9 մլն բարել/օրը, իսկ ներմուծումը՝ 35%-ով կամ 2,4-2,5 մլն բարել/օրը: Հնդկաստանում նավթի սպառման ծավալները դեռ այդքան շատ չեն՝ մոտ 2 մլն բարել/օրը, սակայն էներգակիրների ներմուծումը

կազմում է 70% (Չինաստանինը՝ 40%): ԱՅԽ զեկույցում նաեւ նշվում է, որ Չինաստանն ստիպված է լինելու մինչեւ 2020թ. ավելացնել էներգիայի իր սպառումը 150%-ով, իսկ Չնդկաստանը՝ գրեթե կրկնապատկել:

Չնդկաստանը տնտեսական ցուցանիշների մեծ մասով (համախառն ներքին արտադրանք, արտասահմանյան ներդրումների ծավալ, մեկ շնչին ընկնող եկամուտ եւ այլն) հետ է մնում Չինաստանից: Սակայն Չնդկաստանին օգնում են մի քանի գործոններ, որոնց թվում՝ աշխատուճակ բնակչության քանակը, որն անընդհատ աճելու է, մինչդեռ Չինաստանում «մեկ ընտանիք՝ մեկ զավակ» քաղաքականության արդյունքում այդ ցուցանիշը փոքրանալու է, եւ երկիրը կարող է շատ արագ ծերանալ: Բացի այդ, Չնդկաստանը բավական առաջ է գնացել սեփական գիտության ու տեխնոլոգիաների զարգացման մեջ: Մասնագետները բերում են այսպիսի մի փաստ. թեեւ չինացիների մոտ գրեթե 20 անգամ ավելի շատ բջջային հեռախոս կա, սակայն Չնդկաստանն արտահանում է 10 անգամ շատ ծրագրային արտադրանք, քան Չինաստանը:

Պեկինն ու Դեյին ավելացնում են իրենց տնտեսական կշիռն ու հնարավորությունները եւ կարողանում են էներգապաշարների շուկայում արդեն բացահայտ կերպով մրցակցել ԱՄՆ-ի հետ, եւ նույնիսկ նեղել վերջինիս (Աֆրիկայում, Լատինական Ամերիկայում): Այս պատճառով Վաշինգտոնն արդեն ավելի հաճախ է ստիպված լինելու նավթի համար պայքարի շրջանակներում գնալ քաղաքական ճնշումների՝ չբացառելով նաեւ ռազմական ուժը:

Սակայն Չինաստանն ու Չնդկաստանն այլեւս այնքան թշնամաբար չեն տրամադրված իրար հանդեպ, որքան դա կցանկանար ԱՄՆ-ը: Իհարկե, վաղ թե ուշ նրանց միջեւ կարող է բավական լուրջ բախում ծագել, սակայն այս երկու հսկաները դեռ աճում են ու ձգտում միավորել ջանքերը: Շատ բանի մասին է խոսում, օրինակ, այն փաստը, որ անցյալ տարի Պեկին այց կատարեց Չնդկաստանի Գլխավոր շտաբի ղեկավարը, ինչով հիմք դրվեց երկու երկրների համագործակցությանը ռազմական ոլորտում:

Խոսք կա նաեւ նրա մասին, թե Չնդկաստանը, Չինաստանը, Իրանն ու Ռուսաստանը կնքել են եվրասիական էներգապաշարների մեծ մասի հանդեպ վերահսկողության վերաբերյալ «լուռ» համաձայնագիր: Դրա օգտին են վկայում բազմաթիվ էներգետիկ համաձայնագրերը այս երկրների միջեւ: Միայն անցյալ տարվա ընթացքում Չնդկաստանը ստորագրել է Ռուսաստանի ու Իրանի հետ առեւտրային պայմանագրեր 40 մլրդ ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ, որոնք նախատեսում են

նավթի ու բնական գազի երկարաժամկետ մատակարարումներ, իսկ Չինաստանն ու Իրանը ստորագրել են բնական գազի մատակարարման պայմանագիր: Թեհրանի բարձրաստիճան պաշտոնյաներն ուղղակիորեն հայտարարում են, թե ցանկանում են, որ Չինաստանը գրավի ճապոնիայի տեղը որպես իրանական ածխաջրածինների ամենամեծ գնորդ: ՌԴ էներգետիկայի նախարար Խրիստենկոն ս.թ. նոյեմբերի 25-ին Նյու Դելիում բացված էներգետիկ ֆորումի ժամանակ հայտարարեց, թե «մինչև 2020թ. Ռուսաստանը նպատակ ունի ավելացնել ասիական երկրներ նավթի արտահանումը 3%-ից մինչև 30% (կամ տարեկան 100 մլն տոննա), գազինը՝ 4%-ից մինչև 20% (կամ տարեկան 65 մլրդ խորանարդ մետր)»:

Միաժամանակ, էներգետիկ այս դաշինքին են միանում Հարավային Ամերիկայի երկրները: Բրազիլիան 2004թ. սկզբին պայմանագիր էր կնքել Չնդկաստանի հետ, որով «Հարավը կապվում է Հարավի հետ»: Ամերիկյան հարավը պետք է ասիական հարավին մատակարարի վառելիք, մասնավորապես՝ նավթ: Իսկ 2004թ. նոյեմբերին Չինաստանի ղեկավար Հու Ցզինթանն այցեր կատարեց Բրազիլիա, Արգենտինա ու Վենեսուելա՝ նպատակ ունենալով ապահովել իր երկրի մասնակցությունն այնտեղի գազային ու նավթային նախագծերում: Միայն Բրազիլիայի հետ ստորագրվել են 11 պայմանագիր՝ 10 մլրդ ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով:

Դեռևս 1999թ. Չնդկաստանի կառավարությունը առաջ քաշեց նոր էներգետիկ քաղաքականություն՝ «Ածխաջրածնային նպատակներ 2025» փաստաթղթի տեսքով: Էներգետիկ այս նոր քաղաքականության մեջ հստակորեն գիտակցվում է, որ հնդկական տնտեսությունն աստիճանաբար ավելի ու ավելի է հիմնվելու բնական գազի ու նավթի ներմուծումների վրա եւ զգայուն է լինելու միջազգային էներգետիկ իրավիճակի հանդեպ: 1991-1992թթ. Չնդկաստանը ներմուծում էր նավթի ու բնական գազի 50%-ը: Այսօր այդ թիվը հասել է 70%-ի, իսկ ապագայում՝ 80-90%-ի: Ուստի, Չնդկաստանն այնպիսի արտաքին հարաբերությունների կարիք ունի, որոնք կապահովեն կայուն գնով էներգակիրների կանոնավոր հոսք:

Եթե դիտարկենք ներմուծման ներուճակ աղբյուրներն ու Չնդկաստանի հարաբերությունները արտահանող երկրների հետ, ապա տարբեր խնդիրներ ու հեռանկարներ են բացվում: Չնդկաստանն ու Իրանը չեն կարողացել զբաղվել բնական գազի առետրով, որովհետև խողովակաշարի խնդիրը լուծված չէ: Չնդկաստանը նաև ձգտում է խողովակաշար անցկացնել Կենտրոնական Ասիայից եւ Աֆրիկայից: Այս նոր

ուղիների ամրապնդման համար հնդիկները մեծացնում են ներդրումներն օտարերկրյա ածխաջրածնային ակտիվների մեջ: 2005թ. սկզբի դրությամբ Հնդկաստանն արդեն ներդրել էր առավել քան 3 մլրդ ԱՄՆ դոլար Ռուսաստանի, Սուդանի, Վիետնամի, Բիրմայի ու Լիբիայի նավթային նախագծերում:

Հնդկաստան–Իրան էներգետիկ հարաբերություններում պոտենցիալ, սակայն դեռ չիրագործված նախագիծ է բնական գազի խողովակաշարի անցկացումը Պակիստանի տարածքով: Սպասվում է, որ Իրանը, Պակիստանն ու Հնդկաստանն սկսելու են եռակողմ բանակցություններ բազմամիլիարդանոց այս գազամուղի նախագիծը քննարկելու համար: Հնդկաստանին շատ ձեռնտու է այս նախագիծը, քանի որ այսպես իրանական գազը շատ էժան է ձեռք բերվում. համաձայն իրանական աղբյուրների՝ խողովակաշարով Հնդկաստանն իր էներգետիկ ծախսերում տարեկան տնտեսում է 300 մլն ԱՄՆ դոլար: Պակիստանին նախագիծը նույնպես ձեռնտու է, քանի որ դրանով նա ստանում է բնական գազ (արդեն 2010թ. Իսլամաբադը բնական գազի սուր պակաս է զգալու), ինչպես նաև տրանզիտ-վճարում՝ տարեկան 500-600 մլն ԱՄՆ դոլարի չափով: Նախագծի ծախսերը հոգալու են երեք մասնակից երկրները. Իրանը՝ 48%-ը, Պակիստանը՝ 32%, Հնդկաստանը՝ 20% (ընդհանուր՝ մոտ 3,5-4,5 մլրդ ԱՄՆ դոլար):

Կան այլ ուղիներ, որոնցով իրանական գազը կարող է առաքվել Հնդկաստան: Ռուսաստանյան «Գազպրոմ» ընկերությունն առաջարկել է կառուցել գազամուղ Իրանի Հարավային Պարս գազի դաշտից դեպի Հնդկաստան՝ Արաբական ծովի հատակով, հատելով Պակիստանի ջրային տարածքը: «Գազպրոմն» առաջարկել էր նման նախագիծ դեռ 1997թ., որը մերժվել էր թանկարժեք լինելու պատճառով: Այս անգամ «Գազպրոմն» ասում է, որ Ռուսաստանից Թուրքիա (Սեւ ծովի հատակով) «Երկնագույն հոսք» գազամուղի շինարարության մեջ ձեռք բերված փորձը թույլ կտա իջեցնել Իրան–Պակիստան–Հնդկաստան գազամուղի գինը մինչև 3,2 մլրդ ԱՄՆ դոլար:

Հաշվի առնելով Չինաստանում էներգակիրների հանդեպ աճող պահանջարկը՝ ապագայում նախատեսվում է նույնիսկ գազամուղը հասցնել մինչև այդ երկրի Յուննան նահանգ: Որպես նախագծի շարունակություն հնարավորություն կա ներառել նաև Թուրքմենստանը՝ այսպիսով միացնելով գազամուղին նաև Կենտրոնական Ասիան:

Սա կստեղծի համեմատաբար էժան բնական գազի ցանց, որը կմիավորի Թուրքմենստանը, Իրանը, Պակիստանը, Հնդկաստանն ու Չինաստանը, ինչն ամենեւին չի համընկնում աշխարհում միակ գերուժի

հավակնություններ ունեցող ԱՄՆ նպատակների հետ, որն այս խաղում ունի իր հաշվարկները:

Իրան–ԱՄՆ լարված հարաբերությունները լրջորեն խոչընդոտում են այս նախագծի իրականացմանը: Իրանի միջուկային ծրագրերի եւ այլ խնդիրների հետ կապված՝ ԱՄՆ-ը ձգտում է արգելակել ՅՈՒԵՍՏԱՆԻ մասնակցել այս նախագծին: Միացյալ Նահանգները սպառնացել է ՅՈՒԵՍՏԱՆԻ նկատմամբ կիրառել պատժամիջոցներ, եթե վերջինս շարունակի աշխատանքները Իրան–ՅՈՒԵՍՏԱՆ գազամուղի վրա: ՅՈՒԵՍՏԱՆԻ արտաքին գործերի նախարարությանն ուղղված նամակում ԱՄՆ կառավարությունը նախագուշացրել է, որ կարող է ՅՈՒԵՍՏԱՆԻ ենթարկել 1996թ. Իրանի ու Լիբիայի սանկցիաների ակտին, որը թույլ է տալիս ԱՄՆ-ին կիրառել տնտեսական, առևտրային ու ֆինանսական սահմանափակումներ վերոհիշյալ երկու երկրների գազի ու նավթի բնագավառներում ներդրումներ կատարող երկրների կամ ընկերությունների վրա: Այսպիսով, եթե նույնիսկ Իրանը, Պակիստանն ու ՅՈՒԵՍՏԱՆը հասնեն որեւէ համաձայնության, ԱՄՆ-ը կարող է փչացնել ողջ գործը՝ շարունակելով ճնշումներն Իրանի վրա, որն ունի աշխարհում հարստությամբ երկրորդ բնական գազի պաշարները Ռուսաստանից հետո:

2005թ. մարտի 15-ին Նյու Դելի այցի ժամանակ ԱՄՆ պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսը նշել է, որ Իրան–ՅՈՒԵՍՏԱՆ խողովակաշարը գտնվում է Բուշի վարչակարգի ուշադրության շրջանակում: ՅՈՒԵՍՏԱՆԻ վարչապետ Մանմոհան Սինգիի հետ հանդիպման ժամանակ Ռայսը հայտարարեց, որ «միայն տնտեսական պատճառները չեն արդարացնում առաջարկված Իրան–ՅՈՒԵՍՏԱՆ գազամուղը, եւ եթե անհրաժեշտ է՝ ԱՄՆ-ը կառաջարկի այլընտրանքներ ՅՈՒԵՍՏԱՆԻ էներգակիրների աճող կարիքը բավարարելու համար»: Ռայսն առաջարկություն արեց համագործակցել միջուկային էներգիայի արտադրության ոլորտում:

Այնուհանդերձ, գազամուղի շուրջ հնդկա-պակիստանյան հանդիպումները շարունակվում են: 2005թ. հունիսին ՅՈՒԵՍՏԱՆԻ նավթային գործերի նախարար Մանի Շանքար Աիյերի՝ Պակիստան այցի ժամանակ նախագահ Փերվեզ Մուշարաֆը շեշտեց, թե «Իսլամաբադը երաշխավորում է իր երկրով անցնող խողովակաշարի անվտանգությունը եւ ցանկություն ունի դրա կառուցումն սկսել հաջորդ տարի»: Փաստորեն, երեք երկրներն աշխատում են արագացնել բանակցային գործընթացը, որպեսզի կարողանան սկսել աշխատանքները 2006թ. ապրիլից:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ էներգակիրների համար պայքարում Հնդկաստանն ու Չինաստանն աստիճանաբար դառնում են խիստ կարևոր դերակատարներ: Այս երկրների աճող տնտեսությունները դառնում են ավելի ու ավելի մրցունակ եւ համաշխարհային շուկայում սկսում են նեղել ԱՄՆ-ին: Էներգիայի համաշխարհային շուկայում այս երկու հսկաների հրապարակ գալը չի կարող իր ազդեցությունը չունենալ ընդհանուր աշխարհակարգի վրա, ինչը տեղի է ունենում «բազմաբեւեռ աշխարհն ընդդեմ միաբեւեռ աշխարհի» սցենարի զարգացման հետ զուգահեռ:

**ՍԻՐԻԱՆ ԱՄՆ ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԳՈՒՑԱԿԵՏՈՒՄ**
Սուրեն Մանուկյան

Վերջին տարիներին Սիրիան կորցրել է այն հիմնական առավելությունները, որոնք երկիրը բարձրացնում էին տարածաշրջանային տերության կարգավիճակի: Խոսքը ԽՍՀՄ-ի հետ բարեկամության եւ Սիրիայի 30 տարվա նախագահ Յաֆեզ ալ-Ասադի գործոնի մասին է: ԽՍՀՄ փլուզումից հետո Դամասկոսը կորցրեց զորեղ բարեկամի, իսկ երկարամյա նախագահի մահը իշխանության բերեց նրա երիտասարդ որդի Բաշարին, որի քաղաքական անփորձությունը նախագահության առաջին շրջանում ակնհայտ էր:

Սիրիային նույնիսկ չօգնեց այն հանգամանքը, որ 2000թ. իշխանության գլուխ անցած երիտասարդ, բրիտանական կրթություն ստացած Բաշար ալ-Ասադը պատրաստակամություն դրսեւորեց որոշակի ժողովրդավարական բարեփոխումներ իրականացնել երկրում, իսկ 2001թ. սեպտեմբերյան ահաբեկչական գործողություններից հետո համագործակցության ձեռք մեկնեց Վաշինգտոնին՝ հետախուզական տվյալներ փոխանցելով «ալ-Կաիդայի» վերաբերյալ:

2002թ. փետրվարին Սիրիան Կուբայի եւ Լիբիայի հետ միասին լրացրեց ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի հռչակած «չարի առանցքի» երկրների (Իրաք, Իրան եւ Հյուսիսսային Կորեա) շարքը:

Այս պայմաններում չափազանց թուլացած եւ միջազգային դերակատարությունը զգալիորեն կորցրած Սիրիայի շարունակաբար հայտնվելը միակ գերտերության հետաքրքրությունների կիզակետում ունի շատ հստակ պատճառներ:

ԱՄՆ սիրիական թղթապանակը

ԱՄՆ մերձավորարեւելյան քաղաքականությունում Սիրիան հանդես է գալիս մի քանի կերպարներով:

Սիրիան իբրեւ ահաբեկիչ

1979 թվականից ամեն տարի Սիրիան հայտնվում է ԱՄՆ Պետքարտուղարության կողմից հրապարակվող Ահաբեկչությանը սատարող երկրների ցուցակում, ինչն իր հետ բերում է որոշակի տնտեսական օժանդակության եւ առեւտրի հետ կապված սահմանափակումներ եւ

թույլ է տալիս ԱՄՆ-ին ժամանակ առ ժամանակ ճնշումներ գործադրել երկրի վրա: Հիմնական հանցանքը՝ Դամասկոսում մի շարք կազմակերպությունների գրասենյակների տեղակայումն է, որոնք մեղադրվում են ահաբեկչական գործունեության մեջ: Խոսքն, առաջին հերթին, ՀԱՄԱՍ-ի, Իսլամական ջիհադի, Քրդական բանվորական կուսակցության եւ Հիզբալլահի մասին է:

Այս հանգամանքը նպաստեց Սիրիայի՝ «չարի առանցքի» երկրների շարքում հայտնվելուն: 2002թ. արդեն հիշատակված հաշվետվության մեջ պետքարտուղարի տեղակալ Բոլթոնը հայտարարեց. «Ահաբեկչությանը սատարող երկրները պետք է կանգնեցվեն: Հակառակ դեպքում նրանք կդառնան մեր թիրախը»:

Սակայն այսօր Սիրիան հրաժարվում է ընդունել այս մեղադրանքը՝ հայտարարելով, որ երկրում չկան ահաբեկչական կազմակերպությունների գրասենյակներ, իսկ նշված կազմակերպությունները ներկայացված են երկրի մայրաքաղաքում միայն տեղեկատվական կենտրոնների տեսքով: Ավելին, երկիրն ինքը դարձավ «ալ-Կաիդայի» թիրախ. 2005թ. ապրիլին Դամասկոսի կենտրոնական թաղամասերից մեկում պայթյուններ որոտացին:

Սիրիան իբրեւ ոչ ժողովրդավար

Հաջորդ մեղադրանքը, որ հնչեցվում է Սիրիայի հասցեին, դա երկրի ոչ ժողովրդավարական վարչակարգն է: Ամերիկյան արտաքին քաղաքականության ուղեգծի տեսակետից՝ սա խոչընդոտում է Մեծ Մերձավոր Արեւելքի նախագծի իրականացմանը եւ դրանով իսկ սպառնում աշխարհը ժողովրդավարացված եւ կանխատեսելի տեսնելու ԱՄՆ ցանկությանը: Սակայն պետք է նշել, որ տարածաշրջանային երկրներն արեւմտյան չափանիշներին հարմարեցնելու ԱՄՆ ձգտումը միանշանակ չի ընկալվում ոչ միայն Սիրիայի կամ Իրաքի, այլեւ արաբական մյուս երկրների կողմից:

Սիրիան ռազմականացված պետություն

«Չարի առանցքի» անդամ դառնալու հիմնական պատճառը Դամասկոսի կողմից քիմիական եւ կենսաբանական զենքի ծրագրերի մշակումն է: ԱՄՆ վարչակարգում կարծում են, որ Սիրիան տիրապետում է զարին նյարդապարալիտիկ գազի ամենամեծ պաշարներին արաբական աշխարհում եւ շարունակում է աշխատանքներ տանել ավելի հզոր քիմիական զենքի՝ VX-ի արտադրության ուղղությամբ: Թեեւ Սիրիան ստորագրել է կենսաբանական զենքի արգելման Միջազգային կոնվենցիան, սակայն ԱՄՆ-ում մտավախություն կա, որ վերահսկողության արդյունավետ մեխանիզմի բացակայությունը թույլ է տալիս Սիրիային

խուսափել ստանձնած պարտավորությունների կատարումից: Սպառնալիքի աղբյուր են նաև սիրիական բանակի զինանոցում Սկադ եւ ՍՍ-21 փոքր հեռավորության բալիստիկ հրթիռների առկայությունը, ինչպես նաև միջուկային զենքի մշակման ուղղությամբ հավանական աշխատանքները: Վաշինգտոնում կարծում են, թե Իրաքը կարող էր պատերազմի նախօրեին սեփական միջուկային մշակումները դուրս բերել հենց Սիրիա: Բացի այդ, կասկածի տեղիք է տալիս 1997-1998թթ. պակիստանյան միջուկային ծրագրի հեղինակ Աբդուլ Կադիր Խանի որոշ ժամանակ Դամասկոսում հայտնվելը: Սիրիան, բնականաբար, մերժում է նաև այս մեղադրանքը:

Անհանգիստ հարեւանների շրջապատում

Սակայն, այս ամենի հետ մեկտեղ, այսօր ավելի է կարեւորվում մեկ այլ հանգամանք: Սիրիա-ամերիկյան հարաբերությունների բարդությունները կապված են Սիրիայի հարեւանների հետ:

Երկիրը հայտնվել է երկու կրակի արանքում: Իրաք ամերիկյան ներխուժման եւ Իրանի նկատմամբ սպառնալից կեցվածքի պարագայում Դամասկոսը դատապարտված է լինել ամենաթեժ հակասությունների կենտրոնում:

2004թ. Վաշինգտոն-Դամասկոս հակասությունը կապված էր Սիրիայի արեւելյան հարեւան Իրաքի հետ: Վաշինգտոնը մեղադրեց Դամասկոսին՝ արդեն տապալված Սադամ Հուսեյնի վարչակարգին օգնելու մեջ. ընդարձակ սիրիա-իրաքյան սահմանի պարագայում վերահսկողությունը բավական դժվարանում է, եւ համաձայն ամերիկյան տվյալների՝ սադամյան վարչակարգի բազմաթիվ կողմնակիցներ հնարավոր է, որ ապաստան գտած լինեին հենց Սիրիայում: Բացի այդ, երբ ամերիկյան զորքն Իրաքում նոր էր «խրվում», նույնիսկ կարծիք կար, որ ԱՄՆ-ը կարող է դիմել ռազմարվեստում ընդունված հնարքի՝ ընդլայնելով ռազմական գործողությունների աշխարհագրությունը, թուլացնել ճնշումը Իրաքում սեփական զորամիավորման վրա: Այս պարագայում Սիրիան կարող էր լինել հաջորդ թիրախը: Սակայն Սիրիային հաջողվեց խուսափել հարվածից՝ ընդունելով ամերիկյան պահանջները եւ ավելի խստացնելով Իրաքի հետ սահմանի վերահսկողությունը:

Այժմ արդեն իրանա-ամերիկյան լարվածության ընդլայնման պարագայում Սիրիան նորից հայտնվում է սպառնալիքի տակ: Քանի որ Իրաքում խճճված ամերիկացիները դժվար թե փորձեն այսօր ռազմական գործողություններ սկսել Իրանի դեմ, շատ հավանական է նրանց որոշումը՝ բոլոր միջոցները կիրառել Թեհրանին մեկուսացնելու

ուղղությամբ: Այս պարագայում Սիրիայի նկատմամբ ճնշումների սաստկացումը խիստ տրամաբանական է:

Լիբանանյան հանգույցը

2005-ի սկզբին, օգտագործելով Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Չարիրիի փետրվարի 14-ի սպանությունը, Բեյրութում իրակա-նացվեց «մայրիների հեղափոխություն», որի հետեւանքով Դամասկոսը սկսեց շեշտակիորեն կորցնել իր ազդեցությունն այս երկրում: Սիրիան ստիպված էր զորքերը դուրս բերել Լիբանանից, իսկ մայիսին կայացած խորհրդարանական ընտրություններում մեծամասնություն ապահովե-ցին հակասիրիական ուժերը:

Սիրիան, բացի սեփական շահերից, Լիբանանում մեծապես պահ-պանում էր իրանական հետաքրքրությունները: Լիբանանը սիրիական վերահսկողության պարագայում վերածվել էր յուրահատուկ օֆշորային գոտու, որի միջոցով շրջանառվում էին իրանական ֆինանսական միջոցները:

Քանի որ Դամասկոսը մինչեւ վերջ փորձեց հավատարիմ մնալ սիրիա-իրանական բարեկամությանը, նրա նկատմամբ ճնշումն ավելի ուժեղացավ:

2005թ. հոկտեմբերի 21-ին նախաքննության արդյունքների մասին նախնական զեկույց հրապարակեց Դետլեւ Մեխլիսը, որը ՄԱԿ-ի նախաձեռնած՝ Ռաֆիկ Չարիրիի սպանության հետաքննության միջազ-գային հանձնաժողովի ղեկավարն է: Չեկույցը հիմնականում մեղադրում էր սիրիական հատուկ ծառայություններին, որոնք առնվազն տեղյակ էին պատրաստվող մահափորձի մասին եւ պահանջում էր ապահովել ՄԱԿ հանձնաժողովի անդամներին՝ հարցաքննելու սիրիական «պաշ-տոնատար եւ այլ անձանց»:

Չեկույցի հիման վրա՝ ԱՄՆ, Ֆրանսիայի եւ Մեծ Բրիտանիայի ճնշման տակ ՄԱԿ ԱԽ կողմից ընդունվեց բանաձեւ, որը մեղադրում է Սիրիային Չարիրիի սպանության կազմակերպման եւ հետաքննությանը խոչընդոտելու մեջ: Բանաձեւը նշում է, որ եթե Սիրիան չհամագործակցի հետաքննության հետ, ապա «ԱԽ-ը անհրաժեշտության դեպքում կարող է քննարկել այլ միջոցների կիրառման» հարցը: Բանաձեւը պարտա-դրում է Դամասկոսին ձերբակալել ՄԱԿ հանձնաժողովի անդամների կողմից մատնանշվող ցանկացած անձի եւ թույլ տալ նրանց՝ որոշել հարցաքննության տեղն ու պայմանները: Սա կարող է ծանր փորձու-թյուն լինել Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադի համար, քանի որ կասկածյալների թվում են նրա եղբայր Մահեր Ասադը եւ փեսան՝ ռազ-մական հետախուզության ղեկավար Ասեֆ Շաուքատը:

Սիրիան վերջին պահին համաձայնեց կատարել բոլոր առաջ քաշված պահանջները, եւ սրանով որոշակիորեն հետաձգվեց պատժամիջոցների կիրառումը:

Չեռանկարներ

Այսօր Սիրիային առաջարկ է արվել, որը շատերը շտապեցին անվանել «Քաղաքի փաթեթ»՝ լիբիական առաջնորդի անունով, որը զիջումների գնալով՝ թողություն է ստացել Վաշինգտոնից. պետք է հանձնել Ղարիբի սպանության մեղավորներին, այլեւս չմիջամտել Լիբանանի գործերին, հրաժարվել իրաքյան եւ այլ ծայրահեղական կազմակերպությունների օժանդակությունից եւ, իհարկե, Իրանի հետ բարեկամությունից:

Բաշար ալ-Ասադը պատրաստ է զիջումների, պատահական չէ, որ վերջին հարցազրույցներից մեկում նա հայտարարել է. «Ես Սադամ Յուսեյնը չեմ, ես ուզում եմ համագործակցել»: Թերեւս, հարցը միայն զիջումների չափի մեջ է:

Երիտասարդ Բաշար ալ-Ասադը, որը հինգ տարվա իշխանության շրջանում այդպես էլ չի կարողացել վաստակել իր հոր հեղինակությունը, շատ վտանգավոր երկրնտրանքի առջեւ է կանգնած:

Նա արդեն իսկ զիջել է Լիբանանի հարցում: Լիբանանի կորուստը հոգեբանական մեծ հարված է Սիրիայի համար, որի քաղաքական գործիչների մի քանի սերունդ մշտապես համոզված է եղել, որ Սիրիան եւ Լիբանանը մեկ պետություն են: Արեւելյան հասարակությունները չափազանց զգայուն են առաջնորդի ուժի ցուցադրման եւ թուլությունների նկատմամբ: Այս պայմաններում ցանկացած նոր զիջում շատ ծանր կարող է նստել Սիրիայի ղեկավարի վրա:

Ձիջումներից հրաժարվելը, իր հերթին, կարող է բերել ավելի մեծ ճնշումների միջազգային հանրության եւ ԱՄՆ-ի կողմից:

Մասնավորապես, հնարավոր տնտեսական շրջափակման պայմաններում երկրի վիճակը կարող է վատթարանալ, ինչը լրջորեն կսասանի բաասական վարչակարգի իշխանությունը: Տնտեսական շրջափակումն ավելի վտանգավոր է դառնում այն պայմաններում, երբ Սեխլիսի զեկույցի շուրջ համախմբվել են ոչ միայն ԱՄՆ-ը, որի հետ ապրանքաշրջանառությունն առանց այդ էլ չնչին է, այլեւ եվրոպական պետությունները, որոնց նման քայլը կարող է կործանարար լինել երկրի՝ եվրոպական շուկայից զգալիորեն կախված տնտեսության համար:

ՅԵՏԻՍԼԱՍԻՉՍ. ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱ **Արաքս Փաշայան**

Սառը պատերազմից հետո արեւմտյան վերլուծաբաններից շատերը հանգեցին այն եզրակացության, որ քանի դեռ «նոր» աշխարհը բնութագրող չափորոշիչները մշուշապատ են եւ փոփոխական, ապա կարիք ունեն սահմանվելու «հետ» (post) նախդիրով: Արեւմտյան քաղաքագիտական վերլուծություններում մինչեւ օրս շրջանառվում են «հետնողեռնիզմ», «հետկոմունիզմ», «հետբիպոլիարիզմ» եւ նման հարցադրմամբ այլ եզրեր: Այս տեսանկյունից հետաքրքրական է *հետիսլամիզմ (post-Islamism)* եզրի նշանակությունը, որ նկատի է առնում իսլամիզմի շրջանի ավարտը եւ նոր շրջանի սկիզբը:

Հիշյալ տեսության համաձայն՝ քաղաքական իսլամը պատմականորեն թեւակոխել է երեք փուլ՝ նախաիսլամիզմ, իսլամիզմ եւ հետիսլամիզմ: Ընդ որում՝ յուրաքանչյուր շրջան իր նախորդի էվոլյուցիայի արդյունք է:

Ֆրանսիացի գիտնական Ժիլ Կեպելը, որի գրչին է պատկանում «Զիհադ. իսլամիզմի էքսպանսիան եւ մայրամուտը» մենագրությունը, 1973-ից մինչեւ 20-րդ դարի վերջն ընկած ժամանակահատվածը համարում է իսլամիզմի դարաշրջան: Այս փուլում հետին պլան մղվեց ազգայնականությունը, որ տիրապետող էր մինչ այդ: Արդեն 1980-ականների սկզբից իսլամիզմը տարածում գտավ ողջ իսլամական աշխարհում՝ առաջ քաշելով մի շարք հարցադրումներ՝ կապված հասարակության զարգացման, վաղ իսլամի ակունքներին վերադառնալու, իսլամական հասարակություններում սոցիալական արդարությունը վերականգնելու, քաղաքականության իսլամականացման եւ այլ հիմնահարցերի հետ:

1990-ականներին իսլամական կրոնական ծայրահեղականությունը բացառիկ վերելք ապրեց: Ասվածի ապացույցը ալժիրյան «Զինված իսլամական խմբավորումների», աֆղանական Տալիբանի կամ «ալ-Կաիդայի» գործունեությունն էր:

Իսլամի սկզբունքների մեկնաբանման եւ գործադրման տեսանկյունից միմյանցից տարբերվող իսլամական շարժումները կարողացան լուրջ ընդդիմություն ստեղծել սեփական վարչակարգերի դեմ, որոնք մեղադրվում էին կոռուպացվածության, խոսքի ազատության սահմանափակման, զարգացման արեւմտյան մոդելների ներդրման պատճա-

ռով՝ երկիրը տնտեսական եւ բարոյական անկման հասցնելու մեջ: Իսլամիզմի արժեհամակարգում կարելոր տեղ զբաղեցրեց բռնության փիլիսոփայությունը՝ որպէս ճշմարիտի եւ Ստի միջեւ պայքարի բարոյախոսության դրսեւորում: Բռնությունը հիմնավորվում էր ճշմարիտ իսլամի ակունքներից հեռացած անհատների, հասարակությունների եւ պետությունների դեմ պայքարով:

Որոշ իսլամական շարժումների հաջողվեց իշխանության գալ, սակայն մեծ մասը դատապարտվեց անհաջողության: Դրա պատճառը նաեւ այն էր, որ բռնության մեթոդները շատ հաճախ ոչ համարժեք արձագանք էին գտնում իսլամական հասարակությունների առանձին շրջանակներում՝ դուրացնելով վարչակարգերի պայքարը իսլամիստական շարժումների դեմ:

Ժիլ Կեպելի համոզմամբ՝ 20-րդ դարի վերջին քառորդը նշանավորվեց իսլամական շարժումների տպավորիչ վերելքով, ապա եւ՝ անսպասելի մայրամուտով: Բռնության փիլիսոփայությամբ առաջնորդվող իսլամական շարժումներն աստիճանաբար սկսեցին փոխել իրենց մարտավարությունը:

Ամերիկացի գիտնական Մարթին Քրամերի կարծիքով՝ իսլամիզմը նահանջ է ապրել, քանի որ կորցրել է հասարակության մեջ ունեցած դիրքերը՝ անհանդուրժողականության եւ ինքնամեկուսացման պատճառով:

Ամերիկացի մեկ այլ գիտնական Ջոն Էսպոզիտոյի կարծիքով՝ ակնհայտ է, որ քաղաքական իսլամն այսօր աչքի է ընկնում ավելի սոցիալական, քան քաղաքական շեշտադրմամբ, որ նշանակում է, թե իսլամիզմը ձեռք է բերում նոր հատկանիշներ:

Այս մոտեցումը հիմնավորվում է իսլամական արմատական կրոնաքաղաքական մի շարք կազմակերպությունների, ասեմբլեա՝ Յամասի կամ Յիզբալլահի սոցիալական գործունեությամբ: Վերջիններս մեծ տեղ են հատկացնում բարեգործությանը, հիվանդանոցների, դպրոցների, գրադարանների շինարարությանը եւ մեծ ժողովրդականություն են վայելում իրենց համայնքներում:

Ըստ էության, հետիսլամիզմի շրջանը նշանավորվում է երկու առանցքային փոփոխություններով: Մի կողմից՝ մարտնչող իսլամիզմի ներկայացուցիչները, ընդհանուր առմամբ, հրաժարվում են բռնության մեթոդներից՝ ցանկություն հայտնելով գործել քաղաքական դաշտում: Մյուս կողմից՝ 1990-ականների կեսերից մի շարք արմատական իսլամական ծայրահեղական խմբավորումներ սկսում են իրենց գործունեությունը տեղափոխել սեփական հասարակություններից դուրս՝ դիմագրավելու արաբական իսլամական աշխարհին սպառնացող արտաքին

մարտահրավերները, որ, նախեւառաջ, գալիս են Իսրայելից եւ ԱՄՆ-ից:

Վերը նշված դրույթն ամրագրում է հետիսլամիզմի տեսաբաններից մեկը՝ ֆրանսիացի գիտնական Օլիվեր Ռոյը, որը «Քաղաքական իսլամի ձախողումը» ուսումնասիրության հեղինակն է: Նա հետիսլամիզմն ասելով նկատի է առնում իսլամիզմի «մասնավորեցումը», որտեղ շեշտադրման փոփոխություններ են տեղի ունեցել, այսինքն՝ պայքարը հիմնականում տեղափոխվել է իսլամական հասարակություններից դուրս, սակայն բովանդակությունը մնացել է նույնը:

Ասվածի ապացույցը «ալ-Կաիդայի» գործունեությունն է, որի առաջնորդ Ուսամա բեն Լադենը դեռևս 1998-ին իսլամական աշխարհին կոչ էր անում ջիհադ մղել խաչակիրների եւ հրեաների դեմ, ամենուր սպանել ԱՄՆ քաղաքացիներին: Սակայն նրա կոչը, ընդհանուր առմամբ, մերժեցին անգամ արմատական համարվող իսլամիստներից շատերը, իսկ տոտալ պատերազմ Արեւմուտքի դեմ, ըստ էության, տեղի չունեցավ: Փաստորեն, հետիսլամիզմին բնորոշ է դառնում հրաժարումը մարտնչող իսլամից եւ սալաֆիական (վաղ իսլամական) սկզբունքներից:

Իսլամի գծով փորձագետ Ասեֆ Բայաթի կարծիքով՝ իսլամական հասարակություններում իսլամիստական շարժումները նահանջ են ապրել՝ թեւակոխելով հետիսլամիզմի շրջանը: Ըստ նրա՝ հետիսլամիզմը ջանքեր է գործադրում՝ միաձուլելու կրոնականությունն ու անհատական իրավունքները, հավատքն ու ազատությունը: Չետիսլամիզմն առաջ է քաշում բազմակարծությունը ավտորիտարիզմի փոխարեն եւ ապագան՝ անցյալի փոխարեն:

Չետիսլամիզմն աստիճանաբար իր արտահայտությունն է ստանում տարբեր սոցիալական շարժումներում, քաղաքական գաղափարախոսություններում, կրոնական խոհածություններում՝ պարարտ հող գտնելով նախեւառաջ քաղաքային բնակչության եւ ուսանողության մեջ: Ա.Բայաթի կարծիքով՝ հետիսլամիզմը դրսեւորվել է իրանական հասարակության մեջ՝ իման Խոմեյնիի մահվանից հետո, հատկապես 1990-ականների վերջին եւ 2000-ի սկզբին եւ արտահայտվել կրոնական արդիականությամբ ներշնչված ինտելեկտուալ քննարկումներում ու սոցիալական առանձին իրողություններում:

Չետիսլամիզմը դրսեւորվում է նաեւ իսլամական լիբերալ կամ բարենորոգչական շարժումների գոյությամբ: Իսլամիզմի գաղափարախոսական տկարացումը, փաստորեն, նշանավորում է նրա «հաղթահարման» կամ հետիսլամիզմի շրջանը: 21-րդ դարում իսլամական աշխարհը, հավատացած է Ժ.Կեպելը, վերջնականորեն մուտք կգործի արդիականություն՝ նպաստելով իսլամական ժողովրդավարության տարածմանը:

Ասվածի ապացույցը Սաուդյան Արաբիայում 1990-ականների վերջերից սկիզբ առած իսլամական լիբերալ շարժումներն են, որ ձգտում են ապացուցել, թե իսլամն անհամատեղելի չէ արդիականության, ինչպես եւ՝ ժողովրդավարական արժեքների հետ: Նրանք փորձում են հաղթահարել հասարակական գիտակցության մեջ առկա անհամոզուր-ժողականությունն ու կրոնական մոլեռանդությունը՝ ստեղծելով հակավահաբական քաղաքական պլատֆորմ:

Եթե իսլամիզմին հատուկ է կրոնական ճշմարտության բացարձակացումը եւ իսլամական արժեհամակարգը աշխարհում գերակա դարձնելու անհրաժեշտությունը, ապա հետիսլամիզմին բնորոշ է տարակարծությունն ու փոխհամաձայնությունը:

Չարկ է նշել, որ հետիսլամիզմի տեսությունը քննադատական արձագանք է առաջ բերել տեսության ընդդիմախոսների շրջանում, որոնք պնդում են, թե փոխվել են ոչ թե իսլամիզմի հարցադրումները, այլ միայն նրա մասնավոր՝ մարտնչող բնույթը: Ըստ այդմ՝ հետիսլամիզմը դարձել է ոչ թե տիրապետող իրականություն, այլ՝ քաղաքական իսլամի մի որոշակի դրսեւորում: Եգիպտական ալ-Աիրամ քաղաքական եւ ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոնի փորձագետ Դիա Ռաշուանի կարծիքով՝ հետիսլամիզմը ինքնին չի կարող բնորոշել ոչ ներկա իրողությունները եւ ոչ էլ ապագայի զարգացումները. իսլամիզմը եւ հետիսլամիզմը կարող են հանդես գալ միաժամանակ: Չետիսլամիզմի ի հայտ գալն ամենեւին չի նշանակում իսլամիզմի պատմական ավարտ: Այն, ըստ էության, ծագում է իսլամիզմի փորձից, իսլամիզմի շրջանակներում սկիզբ առած տարաբնույթ դիսկուրսներից ու դրսեւորումներից:

Ամերիկացի գիտնական Դանիել Փայփսի կարծիքով՝ իսլամիզմը դեռեւս կենսունակ է եւ շարունակում է հետեւողականորեն պայքարել շարիաթով ամրագրված իսլամական պետությունների ստեղծման համար:

Չնայած առկա տարաբնույթ մոտեցումներին, ակնհայտ է, որ հետիսլամիզմը պատմական իրողություն է, անխուսափելի էվոլյուցիոն մի շրջան, որն իր վրա է կրում արդիականության եւ մշակութային փոխազդեցությունների կնիքը:

ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ **Շամիլ Սուլթանով**

Շամիլ Սուլթանովը ՌԴ Պետական դումայի պատգամավոր է, «Ռուսաստանի մուսուլմաններ» շարժման համանախագահ: Ստորել ներկայացնում ենք հատվածներ նրա «Արեւմուտքն ընդդէմ իսլամի» հետազոտությունից:

Վերջին 40-50 տարում արեւմտյան քաղաքակրթությունն անսպասելիորեն բախվեց բազմազան հոգեկան խանգարումների ու հիվանդությունների բուռն զարգացող համակարգին:

Եվրոպայում հիվանդությունների ընդհանուր բեռի գրեթե 20 տոկոսը բաժին է ընկնում հոգեկան խանգարումներին: Աշխարհում ինքնասպանությունների ամենաբարձր ցուցանիշներ ունեցող 10 երկրներ եվրոպական ընկերակցությունից են:

Սակայն, եթե խոսենք ժամանակակից արեւմյան քաղաքակրթության հոգեկան ախտորոշման մասին, ապա իր հետեւանքներով ամենավտանգավոր հիվանդությունը սեռական անկարողությունն է (իմպոտենցիա). թեւեւ որոշ մասնագետներ կարծում են, որ այն առանձին, մեկուսացված հիվանդություն չէ, այլ ամբողջ շարք հոգեկան խանգարումների ու հիվանդությունների արդյունք: Ձարգացած արեւմտյան երկրներում բացարձակ եւ իրավիճակային իմպոտենտների քանակը մշտապես աճում է՝ որոշ դեպքերում արդեն հասնելով տղամարդկանց ընդհանուր թվի 80 տոկոսին:

Աճող իմպոտենցիան ուղեկցվում է նաեւ մեկ այլ տխուր երեւույթով՝ այսպես կոչված «սպերմատոզոիդի (արական սերմնաբջիջ) ճգնաժամով». տնտեսապես զարգացած արեւմտյան երկրներում աստիճանաբար նվազում է տղամարդկանց օրգանիզմում արտադրվող սպերմատոզոիդների քանակը: Այս գործընթացի արագությունը, որը սկսվեց մի քանի տասնամյակ առաջ, կազմում է տարեկան 1,5-2 տոկոս: Այլ կերպ ասած՝ արդեն 30-40 տարի հետո Արեւմուտքում տղամարդն ընդհանրապես կարող է զրկվել բեղմնավորելու ընդունակությունից:

Ձարգացած երկրներում կանանց ֆրիզիդությունը (սառնություն) նույնպես աճում է, բայց տղամարդկանց անկարողության համեմատ՝ ավելի փոքր տեմպերով: Իմպոտենցիայի եւ ֆրիզիդության հակառակ

կողմն արտահայտվում է սեռական սանձարձակության աճով, պոռնոգրաֆիայի, մարմնավաճառության, այսպես կոչված, «քաղաքացիական ամուսնությունների» տարածմամբ, վեներական հիվանդությունների ավելացմամբ: Օրինակ, Մեծ Բրիտանիայում միայն վերջին 5 տարում վեներական հիվանդություններով վարակվածների թիվը կրկնապատկվել է:

Արեւմտյան աշխարհում աղետալիորեն սաստկացող իմպոտենցիայի հիմնական պատճառը տիրապետող կենսակերպն է: Այս սոցիալական միջավայրում անհատն ապրում է մշտական, գիտակցաբար խթանվող մշակութասեռական սադրանքների պայմաններում, որոնք հանդիսանում են կենսական եռանդը (ամենից առաջ՝ տղամարդու) խլող իսկական էներգետիկ վամպիրներ:

Իր հետեւանքներով՝ տղամարդու ենթագիտակցության համար ամենավտանգավորը ժամանակակից կնոջ արտաքին տեսքն է, հագուստը, անբռնազբոսիկ պահվածքը եւ այլն: Ժամանակակից նորածնությունն ավելի շուտ ոչ թե հագցնում է կնոջը, այլ առաջարկում է նրա մերկացման տարբեր ձեւեր՝ լրիվ, մասնակի եւ այլն: Համապատասխան գովազդը դեպքերի գերակշիռ մասում կառուցված է կնոջ մարմնի շահագործման վրա: Կինը՝ որպես համապարփակ սեռական խորհրդանիշ, արդի կինոարտադրության, գովազդի, հեռուստատեսության, առեւտրի, շուկա բիզնեսի անքակտելի մասն է:

Հատկապես տղամարդուն, նրա ենթագիտակցությանն է ուղղված այս սադրիչ ագրեսիան: Փողոցներում, աշխատանքում, տեղեկատվական շրջապատում բախվելով տարբեր աստիճանի մերկացած կանանց՝ նա ամեն անգամ գեւային եւ մոլեկուլյար մակարդակներում իր տղամարդկային գիտակցությունում ապրում է յուրատեսակ փոքրատոմային պայթյուն: Բնական է՝ նորմալ տղամարդը դադարում է նորմալ լինելուց, եւ ժամանակի ընթացքում այստեղ էլ չեն օգնում ո՛չ վիագրան, ո՛չ ալկոհոլը, ո՛չ էլ թմրանյութերը:

Մյուս կողմից՝ ներկայիս արեւմտյան կենսակերպը ծեւավորում է ժամանակակից կնոջ մի քանի գերակայող կերպարներ, որը ոչ միայն չի ցանկանում երեխա ծնել, այլեւ ավելի ու ավելի է անընդունակ դառնում առողջ երեխա ծնելու:

Առաջինը՝ գործնական, ագրեսիվ կին-վամպիրի կերպարն է՝ ընդունակ վերջնականապես ահաբեկել զարգացող անլիարժեքությամբ տղամարդուն: Նման կնոջ համար առաջին տեղում կարիերան է. նա ամբողջովին ընդունեց այն քաղաքակրթական դրույթը, թե երեխաներ ծնելը նվազեցնում է իր սոցիալական-պաշտոնական շարժունակու-

թյունը կամ էլ վերջնականապես խաչ է քաշում սեփական կարիերայի վրա: Այդ պատճառով է, որ, օրինակ, բարձրագույն կրթությամբ գերմանուհիների 40 տոկոսը ներկայումս անգավակ է:

Որպեսզի կարիերա ստեղծեն, Արեւմուտքի կանայք զանգվածաբար հրաժարվում են երեխա ծնելուց: Հաջողակ բիզնես-կանայք ստիպված են արհեստական վիժումներ անել, որպեսզի չփչացնեն կարիերան: Այդ նույն պատճառով բիզնես-տիկնայք առավել հաճախ դառնում են լեսբուհիներ:

Երկրորդը՝ միջին սեռի էակի կերպարն է, այսինքն՝ այն կնոջ, որը գիտակցաբար դադարում է կին լինելուց՝ առավելագույնս թաքցնելով իր սեռական պատկանելությունը, օգտագործելով տղամարդու հագուստի ոճը, համապատասխան պահվածքը, ճարտասանությունը եւ այլն:

Կան երկու հիմնական գործոն, որոնք զգալի չափով թույլ են տալիս բացատրել արեւմտյան քաղաքակրթության շրջանակներում թանատոսի ինքնասպանական սինդրոմի (թանատոսի սինդրոմ. մահվան եւ ավերման բնագրի ֆրեյդյան բնորոշումը-*խմբ.*) շեշտակի զարգացումը:

Առաջինը՝ տնտեսական գործոնն է: Կին-սպառողը ժամանակակից արեւմտյան հանրության կարելոր բաղադրիչն է: Սպառողական տնտեսության առավել հարաճուն հատվածը կին-սպառողի համար նախատեսված ապրանքների արտադրությունն է: Հատկապես կանայք են այս կամ այն ձևով կատարում աշխարհում բոլոր գնումների առավել քան 75 տոկոսը:

Այդ իսկ պատճառով կնոջ առավելագույն տնտեսական ազատականացումը, նրան բոլոր ավանդական գործառույթներից (ներառյալ երեխա ծնելը) ազատումը, որոնք նրան խանգարում են սպառել եւ մասնակցել սպառողական տնտեսության վերարտադրմանը՝ ներկայիս արեւմտյան հասարակության հիմնարար արժեքներից են:

Երկրորդը՝ այսպես կոչված, «երկնագույն» գործոնն է: Որոշ իմաստով, Արեւմուտքը կարելի է կոչել «ձեւավորվող երկնագույն քաղաքակրթություն»: Գոյություն ունի ուղղակի կախվածություն վերջին 50 տարում արեւմտյան քաղաքակրթության էվոլյուցիայի բնույթի եւ արեւմտյան երկրների միասեռական ընկերակցության թվակազմի ու ազդեցության աճի միջեւ:

Օրինակ, ներկայումս Մեծ Բրիտանիայի յուրաքանչյուր 20-րդ հիմնական բնակիչը կա՛մ գեյ է, կա՛մ լեսբուհի: Սակայն սեռական փոքրամասնության ազդեցությունն անհամեմատ մեծ է նրա թվաքանակից՝ հաշվի առնելով, առաջին հերթին, «երկնագույնների» եւ «վարդագույնների» պատկանելությունը հասարակության վերին շերտերին:

Միասեռականներն արդեն ոչ միայն չեն թաքցնում իրենց արժեքներն ու աշխարհընկալումը, այլև դրանք եռանդով քարոզում են եւ բավականին արդյունավետ տարածում ժամանակակից հասարակությունում: Արդի արեւմտյան հանրությունում համասեռամոլության գաղափարախոսությունն առաջատարներից է: «Երկնագույն» լինելը դառնում է ոչ միայն մոդայիկ, այլև կարիերայի համար կենսականորեն անհրաժեշտ:

Խոշոր քաղաքական գործիչներն ու մայրաքաղաքների քաղաքագլուխները հպարտորեն են հայտարարում իրենց «երկնագույն» լինելը: Ողջ աշխարհում հայտնի երգիչներ, երգահաններ, նկարիչներ, դիզայներներ, մոդելագործներ, շոու բիզնեսի այլ գործիչներ ազբեսիվորեն ցուցադրում են իրենց միասեռական պատկանելությունը: Հեռուստատեսությունը եւ կինոն, փաստորեն, զավթել են «երկնագույն կլանները»: Միասեռ ամուսնությունները վերջին 10 տարիներին բառացիորեն դադարել են էկզոտիկա լինելուց եւ գրեթե դառնում են նորմ:

Ամերիկյան սենատոր ու միասեռական Ջ.Ստադսը, որը սեռական բռնության էր ենթարկել 16-ամյա դեռահասի, կրկին իր թեկնածությունն առաջադրեց Մասաչուսեթսից սենատորի պաշտոնի համար եւ բարեհաջող վերընտրվեց այդ կաթոլիկ նահանգում: Մեկ այլ սենատոր՝ Բ.Ֆրենկը, հեշտությամբ խուսափեց իր սիրելեանին հովանավորելու մեղադրանքից, որը հասարակաց տուն ուներ սենատորի կալվածքի տարածքում: Բացի այդ, նախագահ Քլինթոնի տարիներին սենատոր Ֆրենկն սկսեց իր զուգընկերոջը բերել Սենատի բաց նիստերին: 2001թ. միասեռական Ջ.Հորմելը դարձավ Լյուքսեմբուրգում ԱՄՆ նախագահի դեսպան:

Արեւմուտքում էլ ավելի է «երկնագույն» դառնում քրիստոնեությունը: Դեռ 1972թ. Քրիստոսի միավորված եկեղեցում (ՔՄԵ)՝ ԱՄՆ ավագագույն բողոքական համայնքում բողոքականության պատմության մեջ երեւան եկավ առաջին պաստոր-միասեռականը, իսկ 2005թ.՝ սեռը փոխած առաջին պաստորը: Բոլորովին վերջերս ՔՄԵ Գերագույն սինոդը հավանություն տվեց միասեռ զույգերի ամուսնության ծեսերը թույլատրող բանաձեւին: Այս որոշումը պաշտպանեց սինոդի պատգամավորների շուրջ 80 տոկոսը:

ՔՄԵ-ից հետ չի մնում նաեւ անգլիկան եկեղեցին, որը նույնպես հիմնովին փոխել է միասեռականների հանդեպ իր վերաբերմունքը: Քենթրբերիի արքեպիսկոպոս եւ այդ եկեղեցու առաջնորդ Ռ.Ուիլյամսը վերջին ժամանակներս բազմիցս է հրապարակավ արտահայտվում գեյերի նկատմամբ «դրական վերաբերմունքի» անհրաժեշտության առիթով:

Ըստ էության, նման «ազատությունը» բողոքական եկեղեցիներում վարկաբեկում է ողջ քրիստոնեությունը: Մարդիկ, որ արագ փոփոխվող եւ ծայրաստիճան անկայուն աշխարհում փնտրում են ամուր հենարան, չեն կարող վստահել «քրիստոնյաներին», որոնք իրենք չեն շարժվում իրենց իսկ սրբազան տեքստերով ու դարերով մշակված ուսմունքով: Հիմնականում հենց այս պատճառով է ողջ աշխարհում դիտվում իսլամի ընդունման աճ, որը տալիս է արժեքների կոշտ համակարգ եւ ակտիվ սոցիալական ծրագիր՝ չներժելով մոնոթեիզմի (միաստվածություն) հիմնարար դոգմաները:

Հոգեկան ախտանիշների տարածման, արեւմտյան հասարակությունը «նյարդային ընկերակցության» վերածելու գործում վճռորոշ դեր խաղաց արեւմտյան վերնախավի (իսթեբլիշմենթ)՝ այսպես կոչված, «բարձր նորածեւության տների» ստեղծողների ու ղեկավարների չափազանց նեղ, սակայն ազդեցիկ խումբը: Փաստորեն, հանդիսանալով «երկնագույն ընկերակցության» գաղափարախոսներ եւ առաջնորդներ, ըստ էության, հենց նրանք են ոճերի, նորածեւության, կենսակերպի որոշման գործում տոն տալիս, այսինքն՝ սահմանում արեւմտյան սպառողական հասարակության ռազմավարությունն ու մարտավարությունը:

«Երկնագույնները» լավ կազմակերպված են, համակարգված եւ, բնականաբար, ձգտում են քաղաքական, մշակութային ու սոցիալական էքսպանսիայի՝ ընդհուպ մինչեւ իշխանության վերին էշելոններում առաջատար դիրքերի զբաղեցման: Համապատասխանաբար՝ նաեւ ողջ արեւմտյան քաղաքակրթությունն է աստիճանաբար վերածվում էլ ավելի ազդեցիկ դարձող համասեռամոլության գաղափարախոսության, մշակույթի եւ հոգեբանության լայնածավալ հարձակման օբյեկտի:

Քանի որ միասեռական ընկերակցությունն ինքը չի կարող բնական եղանակով օրգանապես վերարտադրվել, ապա նաեւ բուն արեւմտյան հասարակության վերարտադրման խնդիրն է աստիճանաբար նենգափոխվում:

Հետաքրքիր է եւս մեկ հանգամանք: Արեւմտյան քաղաքակրթության շրջանակներում հոգեկան հիվանդությունների աճի ընդհանուր միտման պայմաններում՝ հատկապես ոչ ավանդական սեռական կողմնորոշման ընկերակցություններն են ցուցադրում հոգեկան հիվանդությունների ու շեղումների ամենաբարձր ցուցանիշները:

ԱՇԽԱՐՀԸ ԲՈՆԿՎԱԾ Է ՑԱՆՑԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՎ Ալեքսանդր Դուզին

Ցանցային պատերազմը պատերազմների վարման նոր հայեցակարգ է, որը մշակվել է ԱՄՆ Ջինված ուժերի Բարեփոխումների վարչության կողմից: Այս տեսության մշակողները համոզված են, որ մոտ ապագայում եթե այն չփոխարինի պատերազմի ավանդական տեսությունը, ապա էապես ու անշրջելիորեն կփոխի նրան:

Պատերազմի ցանցային կամ ցանցակենտրոն տեսությունը հիմնվում է մարդկային պատմությունը *հողագործական, արդյունաբերական եւ տեղեկատվական* դարաշրջանների բաժանելու սկզբունքի վրա: Այս դարաշրջաններին խստորեն համապատասխանում են *Մախամոդեռն, մոդեռն եւ հետմոդեռն* սոցիոլոգիական հասկացությունները: Տեղեկատվական դարաշրջանը հետմոդեռնի ժամանակաշրջանն է, երբ Արեւմուտքի (առաջին հերթին՝ ԱՄՆ) զարգացած հասարակությունները մտնում են որակապես նոր փուլ:

Այս տեսության համար ամենակարեւոր հասկացությունը «ցանց» եզրն է: Ցանցային սկզբունքի իմաստն այն է, որ ամբողջ մոդելի գլխավոր տարրը հանդիսանում է «տեղեկատվության փոխանակումը»՝ այդ տեղեկատվության արտադրության ձեւերի, նրա բաշխվածության, այնտեղ մուտքի հնարավորության, հակադարձ կապի առավելագույն ընդարձակումը: Ցանցը ներկայացնում է նոր տեղեկատվական տարածություն, որտեղ եւ ծավալվում են հիմնական ռազմավարական գործողությունները, ինչպես նաեւ դրանց լրատվական, դիվանագիտական, տնտեսական եւ տեխնիկական ապահովումը: Մարտական միավորներ, կապի համակարգեր, գործողության տեղեկատվական ապահովում, հասարակական կարծիքի ձեւավորում, դիվանագիտական քայլեր, սոցիալական գործընթացներ, հետախուզություն եւ հակահետախուզություն, ազգային, կրոնական ու հավաքական հոգեբանություն եւ այլն. այսուհետ այդ բոլորն ընկալվում են որպես միասնական ցանցի փոխկապակցված տարրեր, որոնց միջեւ պետք է իրականացվի մշտական տեղեկատվական փոխանակում:

Տեղեկատվական դարաշրջանի «պատերազմի տեսության» շրջանակներում ռազմական բարեփոխման իմաստը հզոր եւ համապարփակ

ցանցի ստեղծումն է, որը կոնցեպտուալ կերպով փոխարինում է ռազմական ստրատեգիայի ավելի վաղ գոյություն ունեցած մոդելներին ու հայեցակարգերին, ինտեգրում նրանց միասնական համակարգում: Կանոնավոր բանակը, հետախուզության բոլոր տեսակները, տեխնիկայի հայտնագործությունները եւ բարձր տեխնոլոգիաները, լրագրությունն ու դիվանագիտությունը, տնտեսական գործընթացները եւ սոցիալական ձեւափոխումները, քաղաքացիական բնակչությունն ու կադրային զինվորականները, կանոնավոր զորամասերը եւ առանձին թույլ կազմակերպված խմբերը՝ այս ամենը ինտեգրվում են միասնական ցանցում, որով շրջանառվում է տեղեկատվությունը: Նման ցանցի ստեղծումը ԱՄՆ Ձինված ուժերի ռազմական բարեփոխման էությունն է:

Բոլոր ցանցային պատերազմների վարման առանցքային խնդիրը «գործողությունների հանրագումարն է՝ ուղղված խաղաղության, ճգնաժամի ու պատերազմի իրադրություններում բարեկամների, չեզոք ուժերի եւ թշնամիների պահվածքի մոդելի ձեւավորմանը»: Դա նշանակում է հրատապ կամ հնարավոր ռազմական գործողությունների բոլոր մասնակիցների նկատմամբ լիակատար հսկողության սահմանում եւ բոլոր իրավիճակներում նրանց համընդհանուր մանիպուլացում: Ե՛լ այն դեպքում, երբ պատերազմ է գնում, ե՛լ այն դեպքում, երբ այն հասունանում է, ե՛լ այն դեպքում, երբ խաղաղություն է տիրում:

Ցանցի ներդրումը աշխարհի երկրներին, ժողովուրդներին, բանակներին ու կառավարություններին գրկում է ամեն տեսակ ինքնուրույնությունից, ինքնիշխանությունից, վերածում նրանց կոշտ կառավարվող, ծրագրավորված մեխանիզմների, ինչը նշանակում է համամոլորակային ուղղակի վերահսկողություն, նոր տիպի համաշխարհային տիրապետություն, երբ կառավարման են ենթակա ոչ թե առանձին սուբյեկտները, այլ նրանց բովանդակությունը, գործողությունները, մտադրությունները եւ այլն: Ըստ էության, ե՛լ թշնամիները, ե՛լ չեզոք դիրք գրաված ուժերն ակնհայտորեն ենթարկվում են պարտադրված սցենարին, գործում ոչ իրենց կամքով: Դա ճակատամարտի շահում է՝ մինչ այն սկսելը:

Ցանցային պատերազմների նպատակն է համաշխարհային մասշտաբով պատմական գործընթացների բոլոր մասնակիցների վրա բացարձակ վերահսկողության սահմանումը: Եվ այստեղ պարտադիր չեն ուղղակի օկուպացիան, մեծաքանակ զորք մտցնելը կամ տարածքի զավթումը: Ցանցն առավել ճկուն զենք է. այն բռնությամբ ու ռազմական ուժով մանիպուլացնում է լոկ ծայրահեղ դեպքերում, եւ հիմնական արդյունքները ձեռք են բերվում գործոնների (տեղեկատվական, սոցիալական եւ այլն) լայն հանրագումարի վրա ազդեցությամբ:

Միացյալ Նահանգների համար ցանցակենտրոն պատերազմների խնդիրն է «բոլորին ԱՄՆ հետ ռազմական մրցակցության անհիմաստության գաղափարի ներշնչումը»: Այսօր ցանցային պատերազմ վարում է ԱՄՆ-ը եւ այն վարում է բոլոր մնացած երկրների ու ժողովուրդների դեմ՝ ինչպես թշնամիների, այնպես էլ բարեկամների եւ չեզոք ուժերի: Արտաքին հսկողության ու գործողությունների արտաքին կառավարման հաստատումը հենց ստրկացում է, միայն թե հետմոդեռնի դարաշրջանում այն այլ տեսքով է ձեւակերպված, քան արդյունաբերական դարաշրջանում: Սակայն ցանցը ոչ այլ ինչ է, քան պատերազմի եւ ռազմական գործողությունների վարման համակարգ, անգամ եթե այն մատուցվում է որպես բարիք: Այդ պատերազմը տարվում է նաեւ Ռուսաստանի դեմ եւ, ինչպես ամեն պատերազմ, ուղղված է նրա նվաճմանը, հպատակեցմանը՝ ինչպիսի եզրերով էլ որ այն հրամցվի:

Միանգամայն ակներեւ է, որ ռուսական հատուկ ծառայությունները, քաղաքական ինստիտուտները, պաշտպանական համակարգերը, ուժային նախարարությունները, գերատեսչությունները հայեցակարգային առումով մնում են մոդեռնի դարաշրջանի (ինդուստրիալ հասարակության) ռազմավարության շրջանակներում: Նման կառույցները սկզբունքորեն ի գորու չեն ոչ միայն արդյունավետ կերպով դիմակայել հետմոդեռնական ցանցային տեխնոլոգիաների մարտահրավերները, այլեւ քաղաքակիրթ ձեւով ճանաչել դրանց կիրառման փաստը: Օգտագործվող ցանցային տեխնոլոգիաները չափազանց նուրբ ու կատարյալ են ռուսական հատուկ ծառայությունների գործող՝ դարձնապարծ համակարգերի համար, որոնք ԱՄՆ համակարգային գործողությունների դեմ անպաշտպան են եւ միանգամայն անարդյունավետ:

Որպես այս գլոբալիստական ցանցի սեզմենտներ համդես են գալիս ինչպես փորձագետների, քաղաքագետների, վերլուծաբանների, տեխնոլոգների ուղղակիորեն ամերիկամետ լոբբին, որն իշխանությանը շրջապատում է ամուր օղակով, այնպես էլ ամերիկյան բազմաքանակ հիմնադրամները: Ռուսական խոշոր կապիտալի եւ բարձրագույն վարչարարության ներկայացուցիչները բնական եղանակով ինտեգրվում են արեւմտյան աշխարհին, որտեղ պահում են իրենց խնայողությունները: Ձանգվածային լրատվամիջոցներն ընթերցողներին ու հեռուստադիտողներին «ճառագայթահարում» են ամերիկյան կաղապարներով պատրաստված տեսողական եւ իմաստային տեղեկատվության հոծ հոսքերով: Եվ այդ գործընթացների մեծ մասն անհնարին է որակել սոսկ իբրեւ «դրսի գործակալների» գործողություններ, ինչպես արդյունաբերական դարաշրջանում էր: Տեղեկատվական դարաշրջանի տեխնոլո-

գիաները նախորդ դարաշրջանի հատուկ ծառայությունների համակարգերով ու մեթոդներով չեն «որսվում»:

* * *

Վերջին տարիներին ցանցային պատերազմները դարձել են ավելի ակնհայտ: Նրանք ԱՄՆ կողմից կոշտ ձեռով տարվում են Իրաքում եւ Աֆղանստանում, նախապատրաստվում Իրանում ու Սիրիայում, նուրբ ձեռով փորձարկվեցին Վրաստանում, Ուկրաինայում, Մոլդովայում եւ ԱՊՀ այլ երկրներում: Նարնջագույն հեղափոխությունը Կիեւում հենց այդպիսի տեխնոլոգիաների իրականացման տիպիկ օրինակ է: Ռուսաստանից Ուկրաինայի «պոկման» խնդիրը լուծվեց եռանդով, համառությամբ, բազմաթիվ գործոնների օգտագործմամբ, ընդ որում՝ առանց դասական ուժային մեթոդների կիրառման: Այս գործընթացի կարեւորագույն գործիքը *նարնջագույն ցանցն* է: Այն ստեղծված է ցանցակենտրոն գործողությունների վարման բոլոր կանոններով: 2004թ. ուկրաինական դրամատիկ աշնան յուրաքանչյուր մասնակից մանիպուլացված էր. որն ուղղակիորեն, որն անուղղակի, որը Ռուսաստանի, որը Եվրոպայի, որը տնտեսական, որը կրոնական լծակների միջոցով:

Ուկրաինայում Ռուսաստանի եւ ռուսամետ ուժերի ձախողումը, մինչ ողջ իրադրության սկիզբը, արդեն կանխորոշված էր, քանզի միմյանց բախվել էին միանգամայն անհամաչափ ուժեր՝ ինդուստրիալ ու տեղեկատվական (հետինդուստրիալ) տեխնոլոգիաները: Հատկապես Կիեւի նարնջագույն հեղափոխությունը ցուցադրեց ռուսական հետամնացության ողջ անհունությունը եւ ամերիկյան գերազանցության ողջ ծավալը: Համաշխարհային ցանցային տիրապետության ճանապարհին ԱՄՆ-ը կատարեց եւս մեկ բազմանշանակ ու տպավորիչ քայլ:

Այժմ արդեն տարակուսանք չկա, որ նման ճակատագիր է սպասվում նաեւ Ռուսաստանին: Դա տեղի կունենա անգամ այն դեպքում, եթե Ռուսաստանը մնա չեզոք տերության կամ նույնիսկ ԱՄՆ բարեկամի կարգավիճակում: 2008թ. մոտերքին Ռուսաստանում բնական կերպով հասունանալու է ճգնաժամ, եւ այդ շրջանում նրա «պահվածքով» զբաղվելու են ու արդեն եռանդով զբաղվում են ցանցային պատերազմների ամերիկյան ճարտարապետները: Դրա համար օգտագործվելու են բուն Ռուսաստանի ներսի հիմնական հատվածները, ազդեցությունը սոցիալական, տեղեկատվական գործընթացների վրա. բոլորին հատկացվելու են իրենց դերերը, եւ բոլորը ստիպված են լինելու դրանք կատարել՝ ե՛ւ նարնջագույնները, ե՛ւ նրանց հակառակորդները, ե՛ւ ընդդիմությունը, ե՛ւ պահպանության կառույցները...

Ռուսաստանի կողմից տեսականորեն միակ վայելուչ պատասխանը կլիներ հետմոդեռնացման ուղղությամբ համաչափ ցանցային ռազմավարության մշակումը՝ զուգահեռ ու սրընթաց վերափոխելով պետության առանձին ոլորտները (կառավարում, հատուկ ծառայություններ, ակադեմիական գիտություն, տեղեկատվական դաշտ): Ռուսական պետականության որոշակի մասը պետք է միահամուռ կերպով մաքրվի ամերիկյան ցանցի հատվածներից, փոխադրվի աշխատանքի ոչ սովորական ռեժիմ, օժտվի արտակարգ լիազորություններով ու լծվի համարժեք ցանցային կառուցվածքի ստեղծմանը՝ ընդունակ գոնե մասնակիորեն հակազդելու ամերիկյան մարտահրավերին: Այն պահանջում է ստեղծել հատուկ խումբ, ուր պետք է մտնեն առանձին բարձրաստիճան վարչարարներ, տարբեր հատուկ ծառայությունների լավագույն պասիոնար կադրեր, ինտելեկտուալներ, գիտնականներ, ճարտարագետներ, քաղաքագետներ, հայրենասիրորեն տրամադրված լրագրողներ ու մշակույթի գործիչներ:

Այդ խմբի խնդիրը պետք է լինի եվրասիական ցանցի մոդելի մշակումը՝ իր մեջ ընդունելով ամերիկյան հետմոդեռնի եւ տեղեկատվական հնարքների հիմնական տարրերը, սակայն ուղղված նրա ազդեցության վեկտորին համաչափորեն հակառակ: Այն ենթադրում է ռուսական զինուժի, հատուկ ծառայությունների, քաղաքական ինստիտուտների, տեղեկատվական համակարգերի, հաղորդակցության ուղիների շտապ ու արտակարգ «հետմոդեռնացում»: Սա անհավատալիորեն դժվարին խնդիր է, բայց չլուծելով կամ գոնե չառաջադրելով այն՝ Ռուսաստանը 2008թ. (եթե ոչ ավելի շուտ) դատապարտված կլինի պարտության նարնջագույն ցանցային տեխնոլոգիաների կողմից: Ցանցային պատերազմը կարելի է շահել միայն ցանցային միջոցներով՝ սեփական պայմաններին ու նպատակներին հարմարեցնելով արդյունավետ եւ սրընթաց զարգացող տեխնոլոգիաները:

«Независимое военное обозрение»

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Սարգիս Հարությունյան ԱԴԻԲԵՋԱՆԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔ. ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ	1
Կարեն Վերանյան ԱԲԽԱԶԻԱՅՈՒՄ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ	7
Գագիկ Տեր-Հարությունյան ՈՌԻՍԱՍՏԱՆԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է 2008-ԻՆ	11
Արտակ Շաքարյան ԱՍԻԱԿԱՆ ԽԱՂԱՑՈՂՆԵՐԸ ԷՆԵՐԳԱԿԻՐՆԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ. ՀԱՅԱՑՔ ԱՊԱԳԱՅԻՆ	16
Սուրեն Մանուկյան ՍԻՐԻԱՆ ԱՄՆ ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԳՈՒՑԱԿԵՏՈՒՄ	22
Արաքս Փաշայան ՀԵՏԻՍԼԱՍԻՉՄ. ԱՆԽՈՒՄԱՓԵԼԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱ	27
Շամիլ Սուլթանով ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ	31
Ալեքսանդր Դուգին ԱՇԽԱՐՀԸ ԲՈՆԿՎԱԾ Է ՑԱՆՑԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՎ	36

*Շապիկի վրա պատկերված է
Արարատը (Արագածի հարավային գագաթից)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Սելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ ՕՄՄ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: